Azg
armenian daily

25 ՕԳՈՍՏՈՍ 1998 ԵՐԵՔՇԱԲԹԻ #156 (1659)

Ուսամա բեն Լադենը մահմեդականներին զենքի է կոչում ընդդեմ ԱՄՆ-ի

ԷԼ ՔՈՒԵՅԹ, 24 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- Միջազգային իսլամական ծայրահեղական Ուսամա բեն Լադենն առաջին անգամ ուղղակիորեն խոստովանել է իր պատասխանատվությունը 1995-96 թվականներին Սաուդյան Արաբիայում ամերիկացի զինծառայողների դեմ կատարված ահաբեկչական գործողությունների համար: Ինչպես հայտնի է, այն ժամանակ էր Ռիադում եւ էլ Խոբարում տեղի ունեցած երկու պայթյունների հետեւանքով զոհվել էր 26 եւ վիրավորվել 360 մարդ:

Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի հաղորդման, բեն Լադենի անձնական ներկայացուցիչ Օմար Բարաքին Աֆղանստանից հեռախոսով ամերիկացի լրագրողներին հայտարարել է, թե իր պետը «մահմեդականներին զենքի է կոչում ԱՄՆ-ի եւ Վաշինգտոնին դաշնակից արաբական վարչակարգերի դեմ»: Ուսամա բեն Լադենի կարծիքով, «անհավատների դեմ ջիհադը» պետք է ներառի ահաբեկչական գործողություններ Միացյալ Նահանգների դեսպանատների դեմ եւ ամերիկյան զորամասերի բոյկոտ: Մինչդեռ, բեն Լադենին թաքցրած Աֆղանստանի «Թալիբան» շարժման առաջնորդ Մոհամեդ Օմարը հայտարարել է, որ Աֆղանստանում վերջ կտրվի շնորհազուրկ սաուդացու գործունեությանը: Թալիբների ղեկավարի խիստ զայրույթն են հարուցել անցյալ հինգշաբթի օրը ամերիկացիների կողմից Աֆղանստանի տարածքի հրթիռակոծմանը «պատասխան տալու»՝ բեն Լադենի տարածքներում: «Հարձակումը կատարվել է Աֆղանստանի հողի վրա, եւ դրան պատասխան տալը «Թալիբանի» գործն է», ասել է մոլլա Մոհամադ Օմարը:

ՄՈՍԿՎԱ

Ռուսաստանին «ծանր քաշային» է պետք

Ելցինը պաշտոնաթող էր արել Չեռնոմիրդինին համոզվելո՞ւ համար, որ նա օրինավոր է եւ ազնիվ

Կիրակի երեկոյան Ռուսաստանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինի հրամանով երկրի կառավարությունը վարչապետ Կիրիենկոյի գլխավորությամբ պաշտոնանկ է արվել: Այս կապակցությամբ երեկ կեսօրին Բորիս Ելցինի ՌԴ բնակչությանն ուղղած հեռուստադիմումը «Ազգ»-ին է տրամադրել ՀՀ-ում ՌԴ դեսպանատունը:

Երեկ ես ընդունեցի ոչ հասարակ մի որոշում. Վիկտոր Չեռնոմիրդինին առաջարկեցի գլխավորել կառավարությունը:

Հինգ ամիս առաջ ոչ ոք չէր սպասում, որ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հարվածը Ռուսաստանին այդքան ցավոտ կլինի, որ երկրի տնտեսական իրավիճակը այս աստիճան կբարդանա: Ստեղծված պայմաններում առաջնային է բացառել հետընթացը, ապահովել կայունությունը: Այսօր կարիք կա նրանց, ում ընդունված է «ծանր քաշային» անվանել: Գտնում եմ, որ անհրաժեշտ են Չեռնոմիրդինի փորձն ու կշիռը: Այս առաջարկը պայմանավորված է մի կարեւոր նկատառումով եւս. ապահովել 2000 թվականի ընտրություններում իշխանության ժառանգականությունը: Օրինավորությունը, ազնվությունը եւ լրջությունը Վիկտոր Չեռնոմիրդինի գլխավոր արժանիքներն են: Կարծում եմ, որ այս հատկությունները որոշիչ կովաններ կլինեն նախագահական ընտրություններում: Նրան չփչացրեցին ոչ իշխանությունը, ոչ պաշտոնաթողությունը:

Ես երախտապարտ եմ Սերգեյ Կիրիենկոյին, որ նա արիաբար փորձում էր օգնել վիճակը:

Այսօր ես Պետական դումայի ենթարկմանը ներկայացրի Չեռնոմիրդինի թեկնածությունը: Պատգամավորներից, տարածաշրջանային ղեկավարներից: Նրան չեմ խնդրում եմ հաստատել եւ աջակցել ինձ:

Ստեղծված իրավիճակում երկարենթարկումների ժամանակ չկա: Չէ՞ որ բոլորիս համար գլխավորը Ռուսաստանի ճակատագիրն է, կայունությունը եւ ռուսաստանցիների կյանքի նորմալ պայմանները:

(Այս մասին կարդալ նաեւ էջ 8)

ԵԿԵՂԵՑԻ

Գերագույն հոգեւոր խորհրդի նիստը Մայր աթոռ Սբ. Էջմիածնում

Օգոստոսի 24-ին Մայր աթոռ Սբ. Էջմիածնում Ամենայն հայոց Գարեգին Առաջին կաթողիկոսի եւ Մ. Նահանգների Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Վազգեն արք. Հովսեփյանի ատենապետությամբ իր աշխատանքներն սկսեց Գերագույն հոգեւոր խորհրդի ընդլայնված նոստյա նիստը:

Բացման աղոթքից հետո ժողովականները հոտնկայս հոգվոց արտասանեցին Կ. Պոլսո պատրիարք երջանկահիշատակ Գարեգին արք. Գազանճյանի հիշատակին:

Առա Նորին Սրբությունը ժողովականներին մանրամասն տեղեկություններ տվեց իր առողջական վիճակի մասին, միաժամանակ իր գնահատականն արտահայտելով Վանական խորհրդին անցնող յոթ ամիսների ընթացքում Մայր աթոռի ընթացիկ գործերը կառավարելու համար:

Նիստի առաջին օրը Նորին Սրբությունը հանդես եկավ ամփոփ զեկույցով Մայր աթոռի միաբանության, հոգեւոր ճեմարանի, տպարանի գործունեության մասին, Գերմանիա, Եգիպտոս եւ Մ. Նահանգներ կատարած հովվական այցելությունների, Մայր աթոռ Ս. Էջմիածին կատարված այցերի, միջեկեղեցական հարաբերությունների մասին:

Ժողովն իր աշխատանքները կշարունակի մինչեւ օգոստոսի 26-ը, որի ընթացքում կքննարկվեն նաեւ 1700-ամյակի տոնակատարությունների, Երեւանի Մայր եկեղեցու շինարարության, նվիրատեսական աթոռների հետ հարաբերությունների, եկեղեցու կանոնադրության մշակման հետ կապված հարցեր, կլսվի ֆինանսական ծախսերի մասին հաշվետվություն:

Տես էջ 2

Ռուսաստանի իրադարձությունները մտահոգիչ են Հայաստանի համար

Մեկնաբանեց վարչապետ Արմեն Դարբինյանը

Ռուսաստանում տիրող իրավիճակը մտահոգիչ է Հայաստանի համար: Բոլոր տեսանկյուններից մեզ համար անհրաժեշտ է ՌԴ կայունությունը քաղաքական, տնտեսական, ֆինանսական բնագավառներում: Այս հայտարարությունը երեկ արեց հանրապետության վարչապետ Արմեն Դարբինյանը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա այցելելիս: Պատասխանելով լրագրողների հարցերին, նա հաստատեց, որ հայաստանյան կառավարությունը կշարունակի բազմակողմանի համագործակցությունը Ռուսաստանի հետ, քանի որ այն կախված է ոչ թե քաղաքական այս կամ այն լիդերի քաղաքական դաշտում հայտնվելուց, այլ ժողովուրդների կամքից:

Ա. Դարբինյանը հայտնեց, որ ճանաչում է Վիկտոր Չեռնոմիրդինին, որին որակեց որպես ֆունդամենտալ գործչի: Ֆինանսական կայունության հաստատման գործում այս նշանակումը դրական ազդեցություն կունենա:

Սերգեյ Կիրիենկոյի հրաժարականն անակնկալ չէր հաշվի առնելով վերջին օրերի հաղորդագրությունները, շարունակեց վարչապետը, եւ բնական էր այնպիսի պայմաններում, երբ իսկապես կորված էր ֆինանսական շուկայի կայունությունը եւ վտանգված են բյուջեի շահերը:

Ա. Դարբինյանը տրամաբանական համարեց հարցադրումը Ռուսաստանի կենտրոնական բանկի նախագահի հրաժարականի մասին, սակայն կարծում է, որ շատ բան է կախված այն հանգամանքից, թե ինչպիսի քայլեր կձեռնարկի Վիկտոր Չեռնոմիրդինը կամ ինչպիսի ծրագրեր կներկայացնի ՌԴ նախագահին եւ Պետդումային:

Վարչապետը նշեց, որ Ռուսաստանը հայտնվել է լուրջ ֆինանսական ճգնաժամի մեջ, որի պատճառները խորն են, առաջին հերթին, բյուջեն ծրագրելիս ոչ հաշվենկատ հաշվարկներ են կատարվել: Բյուջետային դեֆիցիտը ֆինանսավորելիս չափազանց ռիսկային սցենար է վերցվել պետական ներքին արժեթղթերի թողարկման տեսանկյունից: Վերջապես, ՀՀ վարչապետի կարծիքով բանկային համակարգի վերահսկողության տեսանկյունից թույլ են տրվել կոպիտ խախտումներ: Դրանք պատճառ եղան այս ճգնաժամի, որի լուծման համար անհրաժեշտ կլինեն ոչ տիպիկ քայլեր: Հանդես է վարչապետը խոսելով ռուսաստանյան ռուբլու դեւալվացիայի մասին, Ա. Դարբինյանն ասաց, որ հավանաբար, դրան սահմանված կլինեն գնալ, որովհետեւ վիճակն այնպիսին է, որ վերջին դեւալվացիան վերջինը չէ:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ
ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակից
«Ազգի» համար

Թեհրանն ուզում է նպաստել Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը

ԹԵՀՐԱՆ, 24 ՕԳՈՍՏՈՍ, ՍՆՄԲ- «Հայաստանը Իրանի կարեւոր հարեւանն է, եւ պատմական Թեհրանը միշտ էլ երեւանին հատուկ համակրանքով է վերաբերվել», հայտարարեց Իրանի Իսլամական Հանրապետության ԱԳ նախարար Քամալ Խարազին, այսօր Թեհրանի «Մեհրաբադ» միջազգային օդանավակայանում դիմավորելով երկօրյա պատմական այցով Իրան ժամանած Հայաստանի արտաքին գաղափարական գերատեսչության ղեկավար Վազգեն Օսկանյանին:

Ինչպես հաղորդում է ԻՌՆԱ գործակալությունը, իրանական ԱԳՆ ղեկավարն ընդգծել է, որ համագործակցությունը Հայաստանի հետ լիովին համապատասխանում է Իրանի արտաքին քաղաքական շահերին, որի հիմնական խնդիրը տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատումն է: Այդ նպատակին հասնելու երաշխավորը, խարազիի խոսքերով, Իրանի, Հայաստանի եւ Հունաստանի միջեւ եռակողմ համագործակցությունն է:

ԻԻՀ ԱԳՆ ղեկավարը հաղորդեց, որ իր հայ գործընկերոջ հետ բանակցությունների ընթացքում ինքը կրկին մտադիր է ննարկել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն աջակցելու հնարավորության հարցը:

Հայ-իրանական հարաբերությունները «գերազանց» գնահատելով, Օսկանյանն ընդգծեց, որ Հայաստանը իսլամական հանրապետությունը «կարեւոր պետություն է համարում, որը կարող է առմտական դեր խաղալ տարածաշրջանային բոլոր գործընթացներում»:

Անդրադառնալով ղարաբաղյան հիմնախնդրին, Վազգեն Օսկանյանն ափսոսանքի հայտնեց բանակցային գործընթացում ստեղծված փակուղային իրավիճակի կապակցությամբ, որի պատճառը, նրա խոսքերով, Ադրբեջանի առաջ քաշած նախապայմաններն են:

«Հայաստանը պատրաստ է նստել բանակցային սեղանի շուրջ առանց որեւէ նախապայմանի եւ հուսով է, որ Ադրբեջանում կայանալիք նախագահական ընտրություններից հետո բանակցային գործընթացը կվերսկսվի», հայտարարեց Հայաստանի ԱԳՆ ղեկավարը:

ԱՆԿԱՐԱ

«Կիպրոսն ու Հայաստանը թուրքական քաղաքականության սպառնալիք»

ՀԱՅՈՒԹ ՉԱՔԱՐՅԱՆ

Վերջին տարիներին պատմական Անկարայի օրակարգը գլխավորապես զբաղված է երկրում իսլամականության վերելքի եւ Քրդստանի աշխատավորական կուսակցության՝ PKK-ի գլխավորած զրդական շարժման խնդիրներով: Ներքաղաքական այս խնդիրների կողքին Անկարայի օրակարգում կարեւոր տեղ էին զբաղեցնում այնպիսի արտաքին խնդիրներ, ինչպիսիք են թուրք-հունական եւ թուրք-սիրիական հարաբերությունները: Դրա համար առկա էին բավականին լուրջ պատճառներ: Էգեյան ծովում ռազմաքաղաքական իրավիճակի սրումը, որպես կանոն, հանգեցնում էր թուրք-հունական հակասությունների սրմանը, իսկ զրդական հարցը ջրի խնդրով հակակշռելու Թուրքիայի նկրտումները սրում են վերջինիս փոխհարաբերությունների լարվածությունը Սիրիայի հետ: Ահա թե ինչու 1997 թ. հոկտեմբերի նիստում Թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդը կառավարության ուշադրությունը հրավիրում էր Հունաստանի եւ Սիրիայի վրա՝ ներկայացնելով դրանց իբրեւ թուրքական արտաքին քաղաքականության գլխավոր սպառնալիքը:

1998 թ. փետրվարին սակայն Ազգային անվտանգության խորհուրդը վերանայեց իր դիրքորոշումը: Ինչպես նշում է թուրքական մամուլը, գլխավոր սպառնալիքի դերում Հունաստանին ու Սիրիային փոխարինեցին Կիպրոսն ու Հայաստանը: Ի դեպ, նշենք, որ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի՝ մեջլիսի դատաիրավական հանձնաժողովում ննարկվող քրեական նոր օրենսգրքի 359 հոդվածը արգելում է «Հայկական հարցում եւ Կիպրոսի խնդրում Թուրքիայի շահերին հակասող հրատարակությունները»: Համենայն դեպս, եթե սպառնալիքը Կիպրոսի պարագայում բացատրվում է S-300 տիպի ռուսական հրթիռներով, քանի որ դրանց տեղակայումը նշանակում է կղզու տարածքում Ռուսաստանի ռազմական ներկայություն, ապա Հայաստանի պարագան անմիջականորեն պայմանավորված է երկրում իշխանության հերթափոխի, առավել եւս ՀՀ նախագահի պատճառից Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի հետ:

Տես էջ 4

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊԱՏԱՇԽԱՆ

«Հայաստանի մասնակցությունը Բաքվի համաժողովին նվազեցնում է նրա մեկուսացման վտանգը»

Պնդում է Վրաստանում եւ Հայաստանում Եվրամիության դեսպան Դենիս Քորբոյը

«Մեր մեծագույն ցանկությունն է, որ Հայաստանը մտնի միջազգային հանրության կազմ եւ շատ կիսաթափվենք, եթե մենք մեկուսացման մեջ տեղային հակամարտությունների պատճառով: Հայաստանի մասնակցությունը Բաքվի ՏՐԱՍԵԿԱ-ին նվիրված համաժողովին նվազեցնում է նրա մեկուսացման վտանգը: Կասկած չկա, որ Հայաստանը ՏՐԱՍԵԿԱ ծրագրից կստանա իր շահը», այս կարծիքը հայտնեց ԵՄ դեսպանը օգոստոսի 24-ին «Բաստ» ռեստորանում, որտեղ Հայաստանի մի քանի լրատվամիջոցների լրագրողների հրավիրել էր ճաշի սեղանի շուրջ զրույցի ՏՐԱՍԵԿԱ-ի, Եվրամիության եւ առաջիկայում կայանալիք Բաքվի համաժողովում ենթակվելիք խնդիրների շուրջ: Ըստ պրն Քորբոյի, մամուլում եւ տարբեր գործիչների կողմից հնչած մտավախությունները, թե Հայաստանին Բաքվի համաժողովում սպասվում է խաղից դուրս վիճակ, թե հայկական պատվիրակության մասնակցությունը վարչապետի եւ ոչ թե երկրի նախագահի մակարդակով կարող է նրան դժվարին կացության մեջ դնել, այն դեռեւս, երբ ՏՐԱՍԵԿԱ-ի համաժողովի նախաձեռնությունը պատկանում է Վրաստանի ու Ադրբեջանի նախագահներին, հատկապես վերջինիս, որի մոտ մնդամբ էլ հանդիպման վայր է ընտրվել Բաքուն, վաղաժամ են եւ անհիմն: Սրա հետ մեկտեղ սակայն դեսպանը չժխտեց, որ ՏՐԱՍԵԿԱ-ի մայրուղիները Կովկասով անցկացնելու միակ խանգարող հանգամանքը այստեղ գոյություն ունեցող հակամարտությունները (Աբխազիայի, Չեչնիայի եւ հայ-ադրբեջանական) կարող են լինել: «Մենք պետք է լինենք ավելի բաց եւ անկեղծ ՏՐԱՍԵԿԱ-ի ամբողջական ներուժը Հայաստանի համար չի կարող ամբողջությամբ օգտագործվել, քանի դեռ լուծված չէ դարաբաղյան հակամարտությունը», ասաց պրն Քորբոյը:

Եվրամիության դեսպանը հստակ նշեց, որ Հայաստանում ԵՄ-ի եւ նրա ծրագրերի, մասնավորապես ՏԱՍԻՍ-ի ու նրանից «սնվող» ՏՐԱՍԵԿԱ-ի մասին «տեղեկատվության պակաս» կա, որը լրացնելու համար այստեղ Երեւանում կգործի ԵՄ տեղեկատվական կենտրոն: Իսկ Եվրամիության պատվիրակության կամ ներկայացուցչության բացումը Հայաստանում ժամանակի խնդիր է, դա ավելի շատ ֆինանսների հետ է կապված, եւ ոչ թե քաղաքականության: Պրն Քորբոյը մանրամասն ներկայացրեց ՏՐԱՍԵԿԱ ծրագիրը: Այսպիսով

Մեսախի ճանապարհը իրականություն՝ այս անգամ ՏՐԱՍԵԿԱ-ի տեսքով

Չինաստանի եւ Արեւմտյան Եվրոպայի միջեւ գոյություն ունեցող Մեսախի ճանապարհի վերականգնման մասին շատ է գրվել ու խոսվել: Առաջիններից մեկը Վրաստանի նախագահ Շեւարդնաձեն էր, որն իր Չինաստան կատարած այցելության ժամանակ, դեռ ՏՐԱՍԵԿԱ-ի ստեղծումից բավականին առաջ խոսել է այս գաղափարի մասին: Սակայն չստացավ համապատասխան հնչեղություն, մինչեւ որ 1993 թ. ԵՄ-ը որոշեց ստեղծել Եվրոպան Արեւելքին միացնող գլոբալ տրանսպորտային առանցքների մի հատուկ ծրագիր, որը կոչվեց ՏՐԱՍԵԿԱ: Ծրագիրը սկսվել է երեք անդրկովկասյան եւ 5 միջինասիական երկրներից (ի դեպ Հայաստանը ՏՐԱՍԵԿԱ-ի հիմնադիր անդամներից է եւ մասնակցել է նրա բոլոր համաժողովներին): Ծրագրին այնուհետեւ միացել են Մոնղոլիան, Մոլդովան ու Ուկրաինան: Ծրագրով հետաքրքրված են նաեւ Բուլղարիան, Ռումինիան եւ Չինաստանը: Այսպիսով ՏՐԱՍԵԿԱ-ն ունի 11 լիիրավ անդամ-երկիր, ինչը, սակայն, չի նշանակում, որ այս գլոբալ տարածաշրջանային ծրագիրը շահույթ չի կարող բերել տրանսպորտային ուղիներին իրենց աշխարհագրական դիրքով առնչվող մյուս երկրներին:



Ընդհանրապես ՏՐԱՍԵԿԱ-ն Եվրամիության գլոբալ տրանսպորտային ծրագրի ռազմավարության մասն է կազմում: Ծրագրի նպատակն է ստեղծել լրացուցիչ տրանսպորտային ուղիների մի ցանց Եվրոպայից դեպի Միջին Ասիա Կովկասով, եւ օգնել անդամ-երկրներին եվրոպական ու համաշխարհային շուկա մտնելու: Իսկ առեւտրային ուղիների ավելացումը կնպաստի այդ երկրների ավելի անկախ գործունեությանը: ՏՐԱՍԵԿԱ-ի մյուս նպատակը տարածաշրջանային համագործակցության զարգացումն է:

ՏՐԱՍԵԿԱ-ն տեխնիկական օժանդակություն է ստանալու ՏԱՍԻՍ-ից, իսկ ծրագրի ֆինանսավորումն ապահովելու են միջազգային ֆինանսական կազմակերպությունները, մասնավորապես Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկն (EBRD) ու Համաշխարհային բանկը: Ներկայումս կան ՏՐԱՍԵԿԱ-ի շրջանակներում գործող 28 նախագծեր, որոնց մեջ Եվրամիությունն արդեն 40 մլն էյրու է ներդրել որպես տեխնիկական օժանդակություն: Եվս 30 մլն ստացվելու է ներդրումների ձեւով: Ներկայումս ՏՐԱՍԵԿԱ-ի շրջանակներում 6 ներդրումային նախագծեր են գործում, որոնցից մեկը սեւծովյան լաստանավային բեռնափոխադրումների զարգացման ծրագիրն է: EBRD-ն ստանձնել է 300 մլն դոլար տրամադրել ՏՐԱՍԵԿԱ-ին, իսկ ՀԲ-ը՝ 80 մլն, որը պետք է օգտագործվի հիմնականում Վրաստանում ու Հայաստանում մայրուղիների վերականգնման համար:

Ի՞նչ է սպասվում Բաքվում

ՏՐԱՍԵԿԱ-ի անդամ երկրները արդեն կնքել են երկկողմ համաձայնագրեր, սակայն դա դեռ բավական չէ, քանի որ ծրագրի լայնամասշտաբ իրագործման համար անհրաժեշտ է, որ անդամ-երկրները կնքեն բազմակողմ համաձայնագիր, ինչն էլ հենց Բաքվի համաժողովի հիմնական ակնկալիքներից է: Այդ համաձայնագրով եվրասիական տարածաշրջանում պետք է ստեղծվի միասնական տրանսպորտային քաղաքականություն, ավելանա բեռնափոխադրումները՝ երկաթուղով, ավտոմայրուղիներով ու ծովով, ստեղծվի մաքսի ու տրանսպորտային սակագների միասնական համակարգ եւ այլն: Բաքվի համաժողովին մասնակցելու է 35 երկիր, այդ թվում՝ ԵՄ 15 անդամ-երկրները:

Քանի որ լրագրողների հարցերում անհանգստություն կար համաժողովի վայրի ու քաղաքական հնարավոր պարտադրանքների հետ կապված, դեսպան Քորբոյն ամեն կերպ իր պատասխաններում փորձում էր համոզել, որ ՏՐԱՍԵԿԱ-ն քաղաքական ծրագիր չէ, այլ տնտեսական, նրա հիմնական նպատակը մասնակից երկրների միջեւ առեւտրի զարգացումն է: «Այսօր Եվրամիության հիմնական շարժիչ ուժը կարող է լինել դեպի Արեւելք ինտեգրացիան, որը հնարավոր է Միջին Ասիա եւ Հեռավոր Արեւելք տանող առեւտրային ճանապարհների ստեղծմամբ»: Սակայն, այնուամենայնիվ, դեսպանը չբացառեց, որ մասնակից յուրաքանչյուր երկրի վրա հնարավոր են տարբեր քաղաքական ներգործություններ:

ԵՄ դեսպանն անընդհատ շեշտում էր, որ ՏՐԱՍԵԿԱ-ն լրացուցիչ ճանապարհների ծրագիր է: Այն ամենեւին չի խանգարում վերոհիշյալ տարածաշրջաններով անցնող այլ ճանապարհներին, մասնավորապես Ռուսաստանից դեպի հարավ, ԱՄՆ-ում վերջերս առաջ քաշված Մեսախի ճանապարհի վերականգնման ծրագրով նախատեսված, ինչպես նաեւ «Խաչմերուկ» ծրագրով նախատեսված Հայաստանի տարածքով անցնող մայրուղիներին: Ի դեպ, դեսպանն իր զրամանը հայտնեց ՀՀ մամուլում հնչած այն կարծիքներից, թե ՏՐԱՍԵԿԱ-ն նպատակ ունի թուլացնել Ռուսաստանի ներգործությունը ՏՐԱՍԵԿԱ-ի անդամ երկրներում: «Որ ՏՐԱՍԵԿԱ-ի հիմնական մայրուղիները Ռուսաստանի տարածքով չեն անցնում, ամենեւին էլ չի նշանակում, թե ՏՐԱՍԵԿԱ-ն հակառուսական ծրագիր է»: Ռուսաստանը, ինչպես նաեւ մնացած բոլոր շահագրգիռ երկրները պետք է ունենան իրենց շահույթը այդ ճանապարհներից: Ամբողջ խնդիրն այն է, որ Եվրամիությունն իր ներդրումները չի կարող ցրել ողջ վերը նշված տարածքով, այլ պետք է ունենա առաջնահերթ ուղիներ, որտեղ կնպաստակաուղղվեն կոնկրետ գումարներ: Ի դեպ, դեսպանը հայտնեց մի հետաքրքիր փաստ: այսօր Հայաստանը ԵՄ-ին ունի մոտ 51 մլն-ի պարտք, սակայն մոտ ժամանակներս կհաստատվի նոր վարկ, որով ի չիք կդառնան բոլոր պարտքերը՝ վերակառուցման ու շնորհների բաշխման ճանապարհով:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐՈՅԱՆ

ԿՐՈՆԱԿԱՆ

Գերագույն հոգեւոր խորհրդի նիստը Մայր աթոռ Սբ. Էջմիածնում

Սկիզբը էջ 1

Ժողովականների կողմից առաջարկվեց անդրադառնալ նաեւ Հայաստանում կրոնական կազմակերպությունների եւ աղանդավորների գործունեությանը, եկեղեցի-պետություն հարաբերություններին, Հայաստանից դուրս գործող հայոց եկեղեցիների վերանորոգման խնդիրներին:

Նստաշրջանին մասնակցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը, Մայր աթոռի դիվանապետ Ներսես արք. Պոզապալյանը, Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ եւ Փարիզի առաջնորդ Գյուս արք. Նագգաշյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Գեւորգ արք. Սերայդարյանը, Ճայրագույն Արեւելքի հայրապետական պատվիրակ, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի առաջնորդ Աղան արք. Պալիոզյանը, Ամերիկայի Միացյալ Նահանգների Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ եպս. Մարտիրոսյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ եպս. Մկրտչյանը, Ուկրաինայի թեմի առաջնորդ Նաթան եպս. Յովհաննեսյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Անանիա եպս. Առաքելյանը, Գերագույն հոգեւոր խորհրդի ատենապետ Վլադիմիր Բարխուդարյանը, Գրիգոր Խանջյանը, Պիոն Յակոբյանը եւ Ռաֆայել Պապայանը:

ՍԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Հիշեցնենք, որ չորս ամիսների բացակայությունից հետո, օգոստոսի 22-ին Վեհափառը վերադարձել էր Մ. Նահանգներից, ուր մեկնել էր բուժվելու նպատակով: Նյու Յորքից Լոնդոն, ապա Լոնդոնից Երեւան Վեհափառին ուղեկցել էին ԱՄՆ Արեւելյան եւ Արեւմտյան թեմերի առաջնորդներ Խաժակ արք. Պարսամյանը եւ Վայե արք. Հովսեփյանը, Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ եւ Փարիզի առաջնորդ Գյուս արք. Նագգաշյանը: «Զվարթնոց» օդանավակայանում Վեհին դիմավորելու էին եկել ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյանը, «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրեն Ռաֆֆի Հովհաննիսյանը, Կրոնից գործերի խորհրդի նախագահ Լազար Սուքիասյանը, մշակույթի նախարար Ռոլանդ Շառոյանը, Արմավիրի մարզպետ Ալբերտ Հերոյանը, Մայր աթոռի հոգեւոր դասը՝ դիվանապետ Ներսես արք. Պոզապալյանի գլխավորությամբ: ՀՀ վարչապետը, հակառակ նախապես տրված տեղեկության, օդանավակայան չէր ժամանել:

«Հայծխախոտում» աշխատանքը վերսկսվեց

Երկուշաբթի «Հայծխախոտ» ԲԲԸ-ում վերսկսվեց աշխատանքը: «Գրանդ Տոբակո» ձեռնարկության արտոնագրով «Հայծխախոտը» առայժմ կարտադրի փափուկ տուփով «Մարլ» ծխախոտ: Բաժնետերերի խորհրդի ժողովի միահամուռ որոշմամբ հանգուցալուծումը գտնված է. ձեռնարկությունը պետք է դուրս գա տեւական պարապուրդի եւ վեճերի տեղատվությից: Արդեն պատրաստվում է «Հայծխախոտի» նոր տարբերանշանը՝ գեղագիտական լուծմամբ, կմտցվի ծխախոտի տեսականին, եւ ներդրումների, ինչպես նաեւ աշխատանքի արդյունավետության բարձրացման միջոցով գործարանը կփորձի դուրս գալ պարտքերի բեռից՝ հին եւ նոր բաժնետերերի գործակցությամբ:

Ն. Գ.

Պ. Տեր-Պետրոսյան. «Մենք էն ժամանակ էլ չենք վախեցել, հիմա էլ չենք վախենում»

ԵՐԵՎԱՆ, 24 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՀՀ նախկին նախագահի եղբայրը՝ Հայաստանի շինարարների ասոցիացիայի նախագահ Պետրոս Տեր-Պետրոսյանը «Ազատություն» ռադիոկայանի թղթակցին տված հարցազրույցում հերքել է շինանյութերի արտադրության ոլորտում իր ունեցած մենաշնորհի մասին հրապարակված լուրերը եւ հայտարարել, որ ընդհանրապես գործ չի ունեցել շինանյութերի արդյունաբերության հետ:

Այս տարի Պ. Տեր-Պետրոսյանը մի քանի գործարանների տնօրենների հետ ստեղծել եւ ղեկավարում է «Շինինդուստրիա հոլդինգ» ձեռնարկությունը: Ինչպես տեղեկացնում է ռադիոկայանի թղթակիցը, սա Պ. Տեր-Պետրոսյանի գործունեության մի մասն է միայն, դրանից զատ նա նաեւ դասախոսում է, գրքեր է գրում, ամսագիր է հրատարակում:

Պ. Տեր-Պետրոսյանը նշել է, որ իր եղբոր նախագահ լինելը իրեն խանգարել է, քանի որ այդ ժամանակ իրենք իրենց ավելի զուսպ են պահել: «Էն ժամանակ իմ դռան դիմաց կային հարյուրավոր մարդիկ, որոնք մեր օժանդակությունն էին ակնկալում, բայց մենք չենք միջնորդել ոչ մեկի համար: Մեր գերդաստանից ոչ մեկն առաջխաղացում չի ունեցել: Ես էլ եմ եղել իմ պատշոնին, հանգուցյալ եղբայրս (Թելման Տեր-Պետրոսյան - ՆՏ) էլ է եղել իր պատշոնին: Ոչ մեկը չի կարող ասել թե Պետրոս Տեր-Պետրոսյանը չի աշխատել: Շեմ ամաչում, որ եղել եմ քարտաշ, ոռմնադիր ու բանվոր տղա եւ հասել եմ գլխավոր վարչության պետի պատշոնին: Դոցենտ եմ, դաս եմ տալիս: Ես հիմա ինձ ավելի ազատ եմ զգում», ասել է նա:

Մամուլում եղած որոշ հրապարակումներում Պ. Տեր-Պետրոսյանին հանցավոր հարստություն է վերագրվել՝ շեղ առանձնատներ, բենզալցման կայաններ եւ այլն: «Այդ լուրերից ոչ մեկին ես պատասխան չեմ տվել, ասողները թող գան, տանեն, ցույց տան էդ հարստությունը, եւ դրա 75 տոկոսը կտամ ասողներին, 25 տոկոսը՝ սոցիալապես անապահով մարդկանց: Շեմ ժխտում, տղաս մասնակից է մեկ բենզալցման կայանում. ֆուտբոլիստ է, ինչո՞ւ պիտի չունենար: Պնդում եմ, կառուցել եմ բնակարան, պարտավոր էի կառուցել, 40 տարվա շինարար աշխատող եմ, մանավանդ իմ ընտանիքը թոռներիս հետ արդեն կլինի 10-12 հոգի»:

Նշելով, որ Պ. Տեր-Պետրոսյանի գրասենյակը նույն հայտնում է, ուր որոշակի վերանորոգումից հետո տեղավորվելու է նաեւ Լ. Տեր-Պետրոսյանի գրասենյակը, «Ազատության» թղթակիցը հարցրել է, թե հաշվի առնելով Լ. Տեր-Պետրոսյանի տան ուղղությամբ արձակված կրակոցները, արդյոք չի՞ վախենում այս վտանգավոր հարեւանությունից: «Վախ չկա, մենք էն ժամանակ էլ չենք վախեցել, հիմա էլ չենք վախենում», պատասխանել է Պ. Տեր-Պետրոսյանը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Յողովը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՂՂԱԳԻԾ

«Մեր տեսուչները չեն կարող հարկատուին հարաբերվել անմեղության կանխավարկածով»

Հարկային տեսչությունում երկաթը տաք-տաք են ծեծում

Հարկային տեսչության պետ Արտաշես Թումանյանի հետ «Ազգի» հանդիպումը բացահայտեց գրեթե մարտական իրավիճակ: Հարկային տեսչությունը լայնածավալ ստուգումներ է սկսել հացի արտադրության եւ վաճառքի ոլորտում, ծխախոտի բիզնեսում կատարված ստուգայցն արդեն ավարտված է, օրակարգում է շինարարությունը: Արդյունքներն ազդեցիկ են, ի մասնավորի ծխախոտի իրացման ոլորտի ստուգումների արդյունքում 20 միլիոնից ավելի տուգանք է դրվել Սուքիասյանների ընտանիքին ենթակա համատասխան կառույցի վրա: Արտաշես Թումանյանը բավարարված չէր, նրա համոզմամբ, տեղեկատվության արտահոսք է տեղի ունենում, եւ ստուգվողները կանխավ տեղյակ են դառնում հարկային «մրրիկի» մասին, որ պետք է հասնի իրենց տարածք: Միով բանիվ, խնդիրները շատ են, դժգոհությունները երկուստեք հարկատու-հարկահավաք:

– Պարոն Թումանյան, վերջին շրջանում վիճակագրության պատասխանատու տեղեկանքները փաստում են, որ ՀՏ-ն առաջանցիկ կատարում է բյուջեով նախատեսված պարտավորությունները, բայց մամուլում եւ այլուր պարբերաբար բռնկվում են աղմկալի դժգոհություններ: Ըստ որի՝ դժվարին է Հայաստանում ձեռնարկության ափխատանքը հարկային տեսուչների պատճառով:

– Չեմ կարծում, որ բոլոր հարկատուներն են դժգոհ: Լսելի է այն հարկատուների ձայնը, որոնք հատու են չորրորդ իշխանությանը, ուստի նրանք ավելի շատ են երեւում եւ դիմում են անգամ իշխանությանը: Երբ միլիարդների հասույթ ունեցող հարկատուներն են փողոցներում դժգոհություն տարածում, ես շատ հանգիստ եմ վերաբերվում, եւ որոշ առումով դա դրական ցուցանիշ է, իհարկե, վերադահումով, որովհետեւ ծայրահեղություններ հարկային տեսուչների կողմից եւս հնարավոր են: Պատահական չէ նաեւ, որ վերջերս հարկատուները դատական կարգով են լուծում ՀՏ-ի հետ ծագած վեճերը եւ ոչ հազվադեպ հաղթում են:

Տարիներ առաջ որեւէ մեկը չէր կարող պատկերացնել, որ հարկատուն դատարանում կարող էր հաղթել:

– Հայտնի է, որ հարկային տեսչությունը ոչ միայն հարկեր է հավաքում, այլեւ կանխատեսումներ կատարում եւ ստուգումներ անցկացնում: Կարո՞ղ եք ասել՝ որոնք են մեր տնտեսության այն ոլորտները, որտեղ ստվերային շրջանառությունն ավելի մեծ է, եւ հարկային չգանձվող եկամուտներ կան՝ բենզի՞ն, հա՞ց, շինարարությո՞ւն...:

– Բենզինի ոլորտում սահմանի վրա, իրադրությունը բարվոք է: Կան հաստատագրված թվեր, ընդամենը պետք է ներմուծվող ծավալները ճշտել: Չեմ բացառում որեւէ խախտում, իսկ հանրապետության ներսում արդեն պղտոր կետեր կան: Մենք, իհարկե, փորձում ենք հասակեցնել: Հաստատագրեցինք փորձ կետերում բենզինի վաճառքը, մնում է մի քիչ խստացնել մեծածախ առեւտրի հսկողությունը: Շինարարության բնագավառում, այո, ոեզերվներ կան: Այստեղ բարուն չենք հարձակվելու, վաղորդայն զգուշացնում եմ: Նույնը վերաբերում է հացի ոլորտին, որով շատ ուշադիր ենք զբաղվում, եւ տեղերում մեզ արդեն աջակցում են մարզպետարանները՝ օգնում են հայտնաբերելու անօրինական վաճառքի կետերը եւ այլն, փորձելու ենք մինչեւ տարեվերջ այստեղ որոշակի արդյունքների հասնել:

– Մեծածախ-մանրածախ առեւտրի բնագավառում ՀՏ-ը ի՞նչ խնդիրներ է տեսնում:

– Մեծածախ-մանրածախ առեւտրի սահմանագծում ոեզերվներ, այո, կան, արժե ողջ ներկրումը խիստ վերահսկողության տակ վերցնել՝ ֆիսկալ առումով: Վտանգավոր բան եմ ասում, ներկրողները կարող են անհանգստանալ, բայց անհրաժեշտ է: Շատ կարեւոր է որոշակի սահմանափակումներ մտցնել կանխիկ դրամաշրջանառությունը սահմանափակելու ոլորտում: Լուրջ խախտումների հնարավորությունը վերացնելու համար մենք ներկայացրել ենք օրենսդրությունը եւ վարչարարությունը կատարելագործող առաջարկներ, որոնց դահանջով կանխիկ շրջանառությունը պետք է տեղափոխվի բանկեր:

– Հաստատագրված վճարների մասին օրենքի առավելությունները կարծես ակնհայտ են, բայց բինգոյի, խաղատնային եւ ռեստորանային բիզնեսի որոշ ներկայացուցիչներ արդեն աղմկում են, թե իրենց ոլորտը ջախջախվում է:

– Նախկինում գործող մեթոդիկան օրինականորեն թույլ էր տալիս իրականում չհարկել այդ ոլորտները, որովհետեւ գանձվում էին խորհրդանշական գումարներ: Այսօր հարկային դրույքաչափը բարձրացվել է: Խոսքը վերաբերում է հազարավոր դոլարների: Բիզնեսը կդիմանա, թե ոչ, ցույց կտա ժամանակը, օգոստոսի մուծումների արդյունքները կլինեն սպետեմբերին, բայց ես անհանգիստ չեմ, որովհետեւ եթե 50-ի փոխարեն մնան 10-ը խաղատուն եւ բինգո, եւ այդ 10-ը մի քանի անգամ ավելի վճարի, քան նախորդ 50-ը, դա միայն ողջունելի է:



– Մինչ խոշոր հարկատուներին անցնելը, որոնք Հայաստանում խիստ սահմանափակ են եւ հայտնի, փորձենք պարզել, որքանո՞վ են փոքր եւ միջին հարկատուները պաշտպանված ՀՏ «ժարձակումներից»:

– Կարծում եմ, մեր հարաբերությունները հարձակողական չեն, ոչ թե այն պատճառով, որ մենք լավն ենք, այլ որովհետեւ հաստատագրված վճարների մասին օրենքի շնորհիվ այս բիզնեսի մի լուրջ հատված անցել է նման վճարների համակարգին: Օբյեկտիվորեն նրանք անցել են մի ոլորտ, որտեղ ավելի պաշտպանված են:

– Ժամանակին, երբ Դուք նոր էիք դարձել ՀՏ պետ, խոսում էիք այն մասին, որ խոշոր հարկատուներին պետք է հայտնի դարձնել, նրանց հետ գործուն համագործակցել, այսօր այդ համագործակցությունը չի՞ ստացվում:

– Հասկանում եմ, ձեր հարցի մեջ քննադատություն կա, իմ պատկերացումները մեկուկես տարվա ընթացքում փոխվել են, նույն տնտեսությունը ես այլ կերպ եմ նայում, քան այն ժամանակ, երբ համակարգից դուրս էի: Չեմ ասում, թե մոտեցումներս բարեփոխվել են, պարզապես փոխվել են: Ինչ վերաբերում է լավագույն հարկատուներին, այսինքն՝ նրանց, ովքեր հասարակության հանդեպ իրենց պարտքը ավելի լավ են կատարում, քանի մյուսները, ապա այստեղ խնդիրը բարդ է: Պետության ղեկավարությունը հստ ուներ ձեր ասած մտադրությունը, բայց չկարողացանք իրականացնել: Եթե որեւէ մեկը 1 միլիարդ է վճարում, շատ հնարավոր է, որ նրա իրական պարտավորությունները 2 միլիարդ են, իսկ պարբերաբար 5 միլիոն բյուջեին վճարողը, իրականում կարող է լինել շատը ավելի օրինապահ հարկատուների մի մասն ընդունել է այն իրողությունը, որ ավելի լավ է ժամանակին կարգապահ լինել, քան տարին մեկ խոշոր տուգանքների ենթարկվել:

– Իսկ հարկային տեսուչները միշտ են հետեւում օրենքի տառին, համակարգը ազատվո՞ւմ է իր օրինախախտներից:

– Ես առանձնապես զոհ չեմ ներքին կարգապահությունից, եւ ընդհանուր խնդիրը փորձում եմ լուծել լարված առաջադրանքների միջոցով: Վերահսկիչ կառույց ունենք, եղել են աշխատանքից հեռացվածներ, դատվածներ: Կադրերի որոշ բարմացում ենք կատարել, բայց համակարգի ինքնամաքրման գործը դժվար է:

– Հարկատուները շատ են բողոքում անընդմեջ ստուգումներից, Դուք ի՞նչ կառաջարկեք երկուստեք ընդունելի հարաբերություններ հաստատելու համար:

– Հացի բնագավառի օրինակով բացատրեմ, մանավանդ մի փոքր «բենամարար» տրամադրված ուժերը յուրովի մեկնաբանություններ են տալիս: Մենք այսօր ստուգում ենք հացի արտադրության թե մանր, թե միջին, թե խոշոր հարկատուներին: Մի զգալի մասը չի վճարում հարկերը, դեռ ոչինչ, որ տահույքները բարձրանում են, բայց բարձրանում են շրջանառության իրական ծավալները, այսինքն՝ դրա հետ կապված հարկատեսակները: Չեւակերպում են թե վաճառքը խանութներում են կատարում, բայց իրականում այդպես չէ, վաճառում են գործարանից, եւ բազմաթիվ այսպիսի օրինախախտումներ: Հաց արտադրող ձեռնարկություններին մենք առաջարկում ենք հայտարարեք ձեր ադագա մուտքը, ծրագրված շրջանառությունը, եթե դա «խելքին մոտ է», մենք կարող ենք շատ չանհանգստացնել: Այժմ հարկային տեսչությունները հրավիրելու են հացի արտադրությամբ եւ իրացմամբ զբաղվողներին՝ փորձելով նրանց հետ այսպես հարաբերվել: Կարծում եմ, նորմալ է, որովհետեւ հարկատուն չի կարող չծրագրել իր գործունեության ծավալները՝ 10-15 տոկոս ճշգրտությամբ, հասկանանք, ինչպիսի՞ ֆինանսական հոսքերի մասին է խոսքը: ՀՏ-ն սովորական մարմին չէ, նրանք մեզ չեն կարող ասել, թե դա կոմերցիոն գաղտնիք է: Եթե հացի բնագավառում կարողանայինք ԱԱՀ գանձումները մոտեցնել իրականությանը, ապա այդքան հաճախ չէինք ստուգի: Ըստ օրենքի՝ ստուգումներն անցկացվում են տարին մեկ: Մենք լուրջ անելիքներ ունենք նաեւ շինարարության բնագավառում, կան միջոցներ, որոնք վերածվում են անշարժ գույքի, պետք է բացատրություններ փնտրել: Այստեղ խաղացումներ ենք կատարելու, իհարկե առանց սպանելու ոլորտը: ՀՏ նպատակը հարկային կարգապահությունն է:

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

ԱՇԳԱՅԻՆ

Լիբանանում ստեղծվեց նոր հանձնախումբ «Հայաստան» հիմնադրամի ջանքերով

Լիբանանում նոր հանձնախմբի կազմավորման առիթով «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Բաֆֆի Կ. Հովհաննիսյանը իր շնորհավորանքները հղեց նոր կազմին՝ միաժամանակ շնորհակալություն հայտնելով նախկին աշխատակիցներին: Հիմնադրամի առաջին հանձնախումբը, որի կազմի մեջ մտնում էր 5 անդամ, դադարեցրել էր իր գոյությունը 1998 թ. մարտ ամսին՝ համաձայն 1997 թ. սեպտեմբերին Երեւանում կայացած հոգաբարձուների խորհրդի որոշման: Ընդլայնված նոր հանձնախմբի անդամներն առաջադրված են ներկայացուցչական սկզբունքով, սակայն աշխատելու են Հիմնադրամի կանոնադրության համաձայն որոշես անհատներ: Աշխատանքի մեջ ներգրավված են տարբեր կուսակցությունների եւ կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես Ռամկավար ազատական կուսակցություն, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն, Հայ Ավետարանչական միություն, ՀՅԴ, Հայ կաթողիկե համայնք, ՀԲԸՄ:

Իր աշխատանքը նորաստեղծ մարմինը սկսեց հիմնադիր ժողովով, որտեղ քննարկվեցին հանձնախմբի անելիքներն ու խնդիրները: Ժողովին հաջորդեց օգոստոսի 22-ին տեղի ունեցած հիմնադրամի արտաքին եւ հանրային կապերի պատասխանատու Ներսես Մկրտչյանի մամլո ասուլիսը, որին ներկա էր նաեւ Լիբանանում Հայաստանի դեսպան Արման Նավասարդյանը: Ասուլիսին հրավիրված էին Լիբանանի գրեթե բոլոր հայալեզու թերթերի լրագրողները, ինչպես «Զարթօնք», «Արարատ», «Սփիւռք», «Նոր կեանք» եւ այլն, ռադիոն եւ հեռուստատեսությունը: Այնտեղ հիմնականում խոսվեց հիմնադրամի նորանոր ծրագրերի եւ դրանց իրականացման համար անհրաժեշտ համայնքային սերտ համագործակցության, հիմնադրամի համազգային-աղաքաղաքական բնույթի կարեւորման, Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում իրականացվելիք ծրագրերի համար Սփյուռքի մասնակցության եւ աջակցության մասին: Ասուլիսին հրավիրյալները մատնացույց արեցին հիմնադրամի գործունեության թափանցիկության, հիմնադրամ-հանձնախմբեր փոխհարաբերությունների առաջնայնության կարեւորությունը եւ առաջադրեցին մի քանի նոր մոտեցումներ ազգային տարի զանձման եւ դրամահավաքի գործում:

«Հայաստանը ութ տարեկան երեխա է, որն արդեն մեկ անգամ սայթաքել եւ ընկել է, բայց իր մեջ ուժ է գտել, ոտքի կանգնել եւ շարունակել իր ճանապարհը: Հիմա նա ձեր բոլորի օգնության կարիքն ունի՝ ավելի վստահ եւ հոգատար քայլելու համար», ասուլիսի վերջում նշեց հիմնադրամի ներկայացուցիչը:

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Հանրային կապերի բաժին

ԲՈՒՀԱԿԱՆ

Գավառի պետական համալսարանում ավարտվեցին ընդունելության քննությունները

Օգոստոսի 20-ին մաթեմատիկայի գրավոր քննությամբ ավարտվեցին Գավառի պետական համալսարանի ընդունելության քննությունները: Պետհամալսարանի 13 ֆակուլտետներին հայտագրված 230 տեղի համար դիմել էր 335 դիմորդ: Օգոստոսի 22-ին առարկայական հանձնաժողովների ու լիազոր ներկայացուցիչ Վիրաբ Եղիազարյանի մասնակցությամբ ամփոփվեցին ընդունելության քննությունների արդյունքները, եւ այսօր արդեն հայտնի են 230 երջանիկները, որոնք սեպտեմբերի 1-ից կսկսեն ուսանողական կյանքը:

– Քննություններին մասնակցել եմ առաջին օրվանից եւ որեւէ առիթ կամ պատրվակ չի եղել անհամաձայնության թե հանձնաժողովների նախագահների, թե անդամների հետ: Գոհ եմ ընդունելության քննությունները կազմակերպված անցկացնելու եւ բարձր պատրաստակամություն ցուցաբերելու համար: Կարծում եմ, որ Գավառի պետհամալսարանից շատերը կարող են օրինակ վերցնել, քանի որ այդ բոլոր աղահովված է բարձրորակ մասնագետներով ու ամենակարեւորը՝ արտաքին ռեկտորով, – այդպիսին էր լիազոր ներկայացուցիչ Վիրաբ Եղիազարյանի կարծիքը ընդունելության քննությունների կազմակերպության: Ընդհանուր առմամբ, պետհամալսարանի դիմորդների 80 տոկոսը կամ պետհամալսարանի նախապատրաստական ֆակուլտետներ էին հաճախել, կամ էլ լրացուցիչ պարապել դասախոսների մոտ: Իսկ փաստաթղթերը հանձնելու պահից, օրական չորս ժամ անվճար, բոլոր առարկաների գծով, լրացուցիչ պարապմունքներ են անցկացվել մինչեւ քննությունների սկիզբը: Դա էլ բացատրում էր բարձր նիշերի շատ լինելը: Արդեն այս տարի հինգ գերազանց համալսարանավարտներ աշխատում են հենց Գավառի համալսարանում, որը ռեկտոր Հրանտ Հակոբյանի բուռն նպաստակն է, այսօր լավագույն կադրերին պահել համալսարանում, աճեցնել, դարձնել դասախոսներ, որոնք էլ կդառնան Գավառի պետհամալսարանի հենասյուներն ու շատ շուտով տեղական կադրերի միջոցով կլուծվեն դեֆիցիտ մասնագետների եւ մասնագիտությունների բարձր տեղը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՍԿԱՐՅԱՆ

Ուշադրություն. Օգոստոսի 22-ի «Ազգում» «Բջջային հեռախոսը դեռ պերճանք է եւ ոչ հաղորդակցության միջոց» հոդվածում ԱրմենՏելի իր բջջային բաժանորդներին առաջարկած 30 տոկոս զեղչի սանդղակում սխալ է վրիպակ: Զեղչը տրամադրվում է գիշերվա 23:00-ից մինչեւ առավոտյան 7:00-ը: Զեղչն առավել ընդլայնելու հնարավորություն ԱրմենՏելն առայժմ չունի:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ԱՌԱՋԱԲԱԶ

Ինչո՞ւ է բարկացած գլխավոր դասախազի պաշտոնակատարը

Ժիրիկ Խառատյանի հարցազրույցը ոչ թե գրեց, այլ ավելացրեց անորոշություններ

Շաբաթ, օգոստոսի 23-ին, հայկական հեռուստատեսության առաջին ծրագրով ելույթ տրվեց հասուկ թողարկում ՀՀ գլխավոր դասախազ Հենրիկ Խաչատրյանի սպանության հանգամանքների առթիվ հարցազրույցով հանդես եկավ գլխավոր դասախազի պաշտոնակատար Ժիրիկ Խառատյանը: «Հանրապետության իրավապահ մարմինները, ասաց նա, խախտելով նախաքննության տվյալների հրապարակման վերաբերյալ օրենքի պահանջը, հեռուստադիտողներին եւ ընթերցողներին գործի քննության հավասի տվյալները ներկայացնելու առումով, կազմակերպեցին մի շարք հարցազրույցներ եւ հեռուստատեսային հաղորդում, որով հանդես եկան սպանության գործի հետ առնչված բոլոր փորձագետ-մասնագետները եւ հայտնեցին իրենց կարծիքը... Այսօր եւս այդ սկզբունքով ղեկավարվելով ես եկել եմ ստուդիա եւ պատրաստ եմ պատասխանելու ձեր կողմից առաջադրված հարցերին, զերծ մնալով, իհարկե, իմ կողմից ներկայացված փաստերը եւ հանգամանքները մեկնաբանելուց եւ այդ առթիվ համապատասխան եզրակացություն անելուց»:

Հուսալով, որ պրն Խառատյանի հեռուստատեսային հարցազրույցը բավական լայնորեն հայտնի է մեր լսարանին ընդգծեմ միայն ամենագլխավորը: Պրն Խառատյանի ասածից աներկբայորեն բխում էր, որ 1995 թ. մայիսին Ղարափար ավանի բնակիչ Արայիկ Խաչատրյանը «օդանավակայանի տոմսերի գնելու կապակցությամբ կատարել է խարդախություն եւ տիրացել է քաղաքացիների դրամին: Այդ կապակցությամբ քաղաքացիները հայտարարություն էին տվել եւ տրանսպորտի ներքին գործերի բաժիները հարուցել էր համապատասխան քրեական գործ: Ինչպես կարգն է, քննիչը քրեական գործը հարուցելուց հետո հարցում էր կատարել ներքին գործերի ինֆորմացիոն կենտրոն, որպեսզի պարզի, թե այդ անձնավորությունը նախկինում եղե՞լ է քրեական պատասխանատվության ենթարկված, թե ոչ: Ինֆորմացիոն կենտրոնից հայտնել էին, որ դեռեւս 93 թ. այդ անձնավորության նկատմամբ հարուցվել է քրեական գործ եւ կատեգորիայի 3-րդ մասով, որի սանկցիան նախատեսում է պատիժ ազատազրկման ձեւով 4-10 տարի ժամանակով: Այդ հանգամանքների հայտնաբերումից հետո, երբ զեկուցվեց գլխավոր դասախազին, ցուցում տրվեց քրեական գործ հարուցել, բայց ինչպես սկզբում ասացի, Արամ Կարապետյանը խնդրել էր, որպեսզի մեկշաբաթյա ժամկետ տրվեր... Մեկշաբաթյա ժամկետը տրվել էր, բայց այդ քրեական գործը չէր հայտնվել...»: Պրն Խառատյանի հետագա պատմածից ինքնըստինքյան բխում էր, որ Արամ Կարապետյանը անհիմն կերպով նախնական կալանքից ազատ է արձակել վերոհիշյալ Արայիկ Խաչատրյանին, գուցե նաեւ ոչնչացրել է նրա նկատմամբ եղած ոչ միայն քրեական գործը, այլեւ վարույթը, որոնք տարբեր տեղերում են պահվում: Եզրակացությունն ինքնըստինքյան պարզ է. Արամ Կարապետյանը շահագրգռված չէր այդ գործի անհետացման հանգամանքների բացահայտմամբ, որպիսի հանձնարարություն տվել էր գլխավոր դասախազ Հենրիկ Խաչատրյանը: Ընդսմին, ըստ պրն Խառատյանի, տվյալ դեպքում շատ ավելի կարեւոր էր «քրեական գործի կորչելու պատճառները պարզելը», եւ այս պարագայում Արամ Կարապետյանը սփոփված պիտի լիներ բացատրություն տալ, թե ինչու, լինելով տրանսպորտի դասախազ, գործը տրանսպորտի ներքին գործերի բաժնից պահանջել եւ ընդունել է իր վարույթ, ինչո՞ւ հավաս չներշնչող եւ ակնհայտորեն կեղծ բժշկական տեղեկանքի հիման վրա Արայիկ Խաչատրյանին ազատել է նախնական կալանքից եւ 12 օր անց կասեցրել է նաեւ նրա նկատմամբ հարուցված քրեական գործը իբրեւ հոգեկան հիվանդությամբ տառապողի, այնինչ Արայիկ Խաչատրյանն ընդամենը է-պիլեպսիկ հիվանդ է, այժմ էլ ողջ է, վերջին 5 տարում չի դիմել առողջապահական հիմնարկներին իր հիվանդության համար բուժօգնություն ստանալու: Մի խոսքով, եզրակացությունը, որ բխում էր պրն Խառատյանի ելույթից, պարզ էր Արամ Կարապետյանը Հենրիկ Խաչատրյանին սպանել էր խայտառակությունից խուսափելու համար: Այս սպանության մեջ մաֆիայի մասնակցությունը գլխավոր դասախազի պաշտոնակատարը լիովին բացառում էր, թեեւ նշեց, որ ըստ իրենց տվյալների «Արամ Կարապետյանը պարտքեր ունեցել է»:

Իր հարցազրույցի մեջ գլխավոր դասախազի պաշտոնակատարն ակնհայտորեն բարկացած էր զանգվածային լրատվական միջոցների վրա, եւ հարկ համարեց նկատել, թե թղթակիցներից մեկի հարցադրումն այն մասին, թե «եթե սուրճ բերող աշխատակցուհու կողմից դուռը չփակվեր, հնարավոր չէ՞ր, որ Խաչատրյանը դռնից դուրս գար», առնվազն «տեղազննումից անտեղյակ մարդու հարցադրում է, որովհետեւ աշխատակցուհին փակել էր ոչ թե Խաչատրյանի աշխատասենյակից հանգստասենյակ տանող դուռը, որը միշտ բաց էր եւ դեպքի վայրը մտնելուց հետո մենք տեսանք, որ, իրոք, այդպես էլ բաց է, այլ փակել էր հանգստասենյակից կոլեգիայի սենյակ տանող սենյակի դուռը»: Դիմելով լրատվամիջոցների ղեկավարներին եւ թղթակիցներին, պրն Խառատյանն ընդգծեց. «Եթե դուք տպագրում եք որեւէ հոդված, հոդվածում կոնկրետ լուրջ փաստ եք արձանագրում, ես հակված եմ մտածելու, որ այդ փաստի վերաբերյալ դուք ունեք բավականին լուրջ հիմքեր»: Գլխավոր դասախազի հարգելի պրն պաշտոնակատարին կուզեի հանգուցյալ Հենրիկ Խաչատրյանը մինչեւ ծակատագրական կրակոցն ինչ է արել, ում հետ եւ քանի րոպե է հանդիպել: Եթե պրն Խառատյանն իրեն նեղություն տա ծանոթանալու իրենց իսկ տարածած այդ հաղորդագրությանը, ապա կնկատի, որ այնտեղ նշված չէ, թե անձամբ ինքը գլխավոր դասախազի հետ հանդիպել է երկու անգամ մինչեւ կառավարության նիստի գնալը եւ դրանից հետո, ինչպես հայտարարում էր հեռուստակրանից:

Հիշյալ հաղորդագրության մեջ նշված է պրն Խառատյանի եւ Հենրիկ Խաչատրյանի միայն մեկ հանդիպման մասին: Նույն փաստաթղթում սեւով սպիտակի վրա գրված է, թե դասախազության աշխատակցուհի Սիդա Շահբազյանը «սուրճ է պատրաստել եւ իր մոտ եղած բանալիներով փակել է հանգստի սենյակի, ինչպես նաեւ կոլեգիայի սենյակի դռները ու դուրս է եկել»: Էլ ինչու է պրն Խառատյանը նեղանում, երբ լրագրողները տարակուսում են այդ չարաբաստիկ դռները փակելու մասին: Առավել քան տարօրինակ է, երբ գլխավոր դասախազի տեղակալն իր հեռուստաելույթում անանուն մի մեջբերում է կատարում գոնե ինձ անհայտ մի հրապարակումից, ուր ասված է, թե «հարցին լրագրային հնչեղություն տալը նշանակում է հասարակության մեջ եղած անորոշություններին ավելացնել եւս մեկը: Նման հրապարակումները դժվար թե ճշմարտությանը հասնելու խթան հանդիսանան: Դրանք եթե լրագրային սեթեւեթանքներ չեն, վաստիացնել, որ ճիշտ նույն կերպ մենք ենք մտածում իրենց մասին: Սակայն ամբողջ ցավն այն է, որ լրագրողների բոլոր այն հրապարակումները, որոնք հարուցել էին պրն Խառատյանի դժգոհությունը, մեծ մասամբ հիմնվում են հենց այն տեղեկությունների վրա, որոնք ավելի վաղ հրապարակել է ինքը դասախազությունը: Օրինակ, դեռեւս օգոստոսի 11-ին հրապարակվել է հանրապետական դասախազության հաղորդագրությունը գլխավոր դասախազի վերջին օրվա մասին, ուր ասվում է, թե հանգուցյալ Հենրիկ Խաչատրյանը մինչեւ ծակատագրական կրակոցն ինչ է արել, ում հետ եւ քանի րոպե է հանդիպել: Եթե պրն Խառատյանն իրեն նեղություն տա ծանոթանալու իրենց իսկ տարածած այդ հաղորդագրությանը, ապա կնկատի, որ այնտեղ նշված չէ, թե անձամբ ինքը գլխավոր դասախազի հետ հանդիպել է երկու անգամ մինչեւ կառավարության նիստի գնալը եւ դրանից հետո, ինչպես հայտարարում էր հեռուստակրանից:

Հիշյալ հաղորդագրության մեջ նշված է պրն Խառատյանի եւ Հենրիկ Խաչատրյանի միայն մեկ հանդիպման մասին: Նույն փաստաթղթում սեւով սպիտակի վրա գրված է, թե դասախազության աշխատակցուհի Սիդա Շահբազյանը «սուրճ է պատրաստել եւ իր մոտ եղած բանալիներով փակել է հանգստի սենյակի, ինչպես նաեւ կոլեգիայի սենյակի դռները ու դուրս է եկել»: Էլ ինչու է պրն Խառատյանը նեղանում, երբ լրագրողները տարակուսում են այդ չարաբաստիկ դռները փակելու մասին: Առավել քան տարօրինակ է, երբ գլխավոր դասախազի տեղակալն իր հեռուստաելույթում անանուն մի մեջբերում է կատարում գոնե ինձ անհայտ մի հրապարակումից, ուր ասված է, թե «հարցին լրագրային հնչեղություն տալը նշանակում է հասարակության մեջ եղած անորոշություններին ավելացնել եւս մեկը: Նման հրապարակումները դժվար թե ճշմարտությանը հասնելու խթան հանդիսանան: Դրանք եթե լրագրային սեթեւեթանքներ չեն, ապա հանրապետության առանց այն էլ անորոշ քաղաքական մթնոլորտն ավելի պղտորելու նպատակ են հետապնդում»: Ես պիտի հիասթափեցնեմ գլխավոր դասախազի պաշտոնակատարին, հակառակ իր աղբյուրի, ես ամենեւին չեմ կարծում, թե հանրապետության «քաղաքական մթնոլորտն առանց այն էլ անորոշ է»: Երկրորդ, գուցե թե հանրապետության գլխավոր դասախազի սպանության հետ կապված ալեկոծությունների մեջ որեւէ անբարո լրագրող իսկապես զբաղվում է ավելորդ աղմկարարությամբ, սակայն կասարելապես համոզված եմ, որ իմ գործընկերների բացարձակ մեծամասնությունն այս աղմուկի մեջ ներքաշվել է ամենաազնիվ մղումներով: Վերջին հաշվով, լրագրողն ընդամենն արձագանքում է հասարակական տրամադրություններին, արտահայտում է հասարակության մեջ եղած կարծիքները, որոնք, շատ հնարավոր է, տվյալ քրեական գործի հանգամանքներին անտեղյակ լինելու հետեւանք են, սակայն անվերապահորեն վկայում են այդ գործի նկատմամբ հասարակության հիրավի վիթխարի հետաքրքրությունը: Այս պարագայում մամուլի նույնիսկ անհաջող կամ զուտ ենթադրությունների վրա հիմնված հրապարակումը միմիայն զգաստացնող ազդեցություն կարող է ունենալ իրավապահ մարմինների համար: Այնպես որ, պրն Ժիրիկ Խառատյանն իզուր է բարկանում: Դրա փոխարեն շատ ավելի լավ կլիներ, եթե նա իր հեռուստատեսային հարցազրույցում պարզ ու հստակ բացատրեր, թե ի՞նչ հիման վրա է Մոսկվան հետաքրքրվում Արայիկ Խաչատրյանին քրեական պատասխանատվության ենթարկելու գործով, որի մասին հստակորեն ասաց ինքը՝ պրն Խառատյանը, սակայն չգիտես ինչու, մոռացավ կամ շրջանցեց այդ առթիվ հեռուստալրագրողի տված հարցը:

Զգույշ պետք է լինել: Հեռուստաթերից ավելի լավ է ասել ամեն ինչ անկեղծորեն, քան թերասացություններ թույլ տալ եւ ծնել նոր կասկածներ:

ՌՈՒԲԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Կիպրոսն ու Հայաստանը թուրքական հաղթականության սպառնալիք»

Սկիզբը էջ 1

Ինչպես հայտնի է, Թուրքիան, ճանաչելով Հայաստանի անկախությունը, երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար հայկական իշխանություններին ներկայացնում էր հետեւյալ նախադայմանները. չհիշատակել 1915 թ. Հայոց ցեղասպանությունը, պատշաճորեն հրաժարվել պահանջատիրությունից, ճնշում գործադրել Լեռնային Ղարաբաղի վրա դադարեցնելու պայքարը եւ ընդունելու Ադրբեջանի գերակայությունն ու տարածքային ամբողջականությունը: Միաժամանակ պահանջվում էր երաշխիքներով հավաստիացում, որ Հայաստանը զերծ կմնա Թուրքիայի շահերին հակասող գործողություններից եւ ամեն կերպ կլեզոֆացնի հայկական լոբբիի «հակաթուրքական» գործունեությունը սփյուռքում:

Թեեւ Տեր-Պետրոսյանի իշխանությունները միջազգային պրակտիկային անհարիր այս նախադայմանները չէին կատարում, սակայն, երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու իրենց նախաձեռնություններով նպաստում էին, որպեսզի Թուրքիան հետզհետե կոչտացնի իր դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ: Դա հատկապես ակնառու դարձավ 1992-93 թթ. ԼՂՀ պատերազմական բանակի հաղթական գործողություններից հետո, երբ Հայաստանը ենթարկվեց փաստացի շրջափակման: Դեռ ավելին. ոչ միայն հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը, այլեւ սահմանային դռան բացումն անգամ Թուրքիան պայմանավորեց Ադրբեջանի գրավյալ տարածքներից հայկական զորքերի լիակատար դուրսբերմամբ:

Հատկանշական է, որ բացասաբար մոտենալով Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, Թուրքիայի քաղաքական շրջանակները Հայաստանում Տեր-Պետրոսյանի իշխանության պահպանմամբ ակնհայտ շահագրգռվածություն էին ցուցաբերում: Դա պատահական չէր: Անկախ Հայաստանը շրջափակելու, նրան կատարելապես քայքայելու նկրտումներից Թուրքիան շնորհիվ Տեր-Պետրոսյանի համապատասխան քաղաքականության, պահպանում էր «շինիչ երկխոսությունը հայ դիվանագետների հետ»: Նա այդ երկխոսության միջոցով Անդրկովկասում պահպանում էր իր քաղաքական ակտիվությունը, առեւտրական-տնտեսական հարաբերությունների հեռանկարով հրապուրում Հայաստանին, արտաքին քաղաքական կողմնորոշման առումով նրան կանգնեցնում էր երկընտրանքի առջեւ եւ վերջապես, հայ-ադրբեջանական հակամարտությանը միջամտելու հնարավորություն էր ձեռք բերում: Ահա թե ինչու «Հյուրրիյեթի» գործադիր տնօրեն Էրքուրուլ Օզքյոքը նույն թերթի փետրվարի 14-ի համարում Տեր-Պետրոսյանի հրաժարականը վերջին տարիների թուրքական արտաքին քաղաքականության խոշորագույն ձախողումն էր համարում: «Թուրքիան, գրում էր նա, պետք է աջակցեր Տեր-Պետրոսյանի պես չափավոր նախագահին, այլ ոչ թե նրան դեմ հանդիման թողներ իր ճակատագրին»:

Շահագրգռության առումով, Օզքյոքին լրացնելու է գալիս Էրգուն Բալջին: «Հյուրրիյեթի» մարտի 25-ի համարում նա նշում է. «Տեր-Պետրոսյանը Լեռնային Ղարաբաղի հարցում Ադրբեջանի հետ հաշվեմուրհակներ ուներ: Նա գտնում էր, որ Ղարաբաղի անկախության պահանջները Հայաստանին մեկուսացման են դատապարտում: Միաժամանակ Տեր-Պետրոսյանը Ռուսաստանի հետ լավ հարաբերություններ պահպանելով հանդերձ, ամեն կերպ ջանում էր ԱՄՆ-ի ու Թրանսիայի միջոցով դուրս գալ Արեւմուտք եւ դրանով էլ թուլացնել իր երկրի կախվածությունը Մոսկվայից»: Իսկ թուրք գիտնական Մելիհ Ակքաշը հունիսի 18-ին պատասխանելով «Սաղդույու» հանդեսի թղթակցին, տվյալ կարծիքն է արտահայտում. «Թուրքիան Տեր-Պետրոսյանի հրաժարականով կորցրեց իր խոշորագույն հաղթաթուղթը: Լեւոն Տեր-Պետրոսյանը Թուրքիայի համար մեծ շանս էր»:

Վերոհիշյալ գնահատականներն, ինչ խոսք, սոսկ Տեր-Պետրոսյանի իշխանության պահպանման շահագրգռություններ չեն, այլ Հայաստանի ներքին գործերին միջամտելու դրսեւորումներն են նաեւ: Հատկանշական է, որ Տեր-Պետրոսյանի հրաժարականով Թուրքիայի շահագրգռությունը վերածեց մտահոգության: Թուրքական մամուլը դարձավ դրա արտահայտիչը: Պատահական չէ, որ նույն Էրգուն Բալջին դեռ նախագահական ընտրությունների օրերին շտապեց հայտարարել. «Եթե ընտրությունների երկրորդ փուլն ավարտվի Ռոբերտ Քոչարյանի հաղթանակով, ապա դժվար չէ կռահել, թե նա կոշտ եւ անհաշտ քաղաքականությամբ բարդություններ առջեւ կկանգնեցնի Թուրքիային: Ինչպես երեւում է, Հայաստանը Թուրքիային գլխացավանք է պատճառելու»:

ՀՀ նախագահի պաշտոնում Ռոբերտ Քոչարյանի ընտրությամբ, վերոհիշյալ մտահոգությունը խորացավ: Իսկ Յալթայում կայացած Քոչարյան-Դեմիրել հանդիպումից հետո հասավ գագաթնակետին: Դրան հետեւեցին թուրքական մամուլի հարձակումները ՀՀ նախագահի վրա, եւ վերջինս համարվեց «ահաբեկիչ» կամ «դաշնակցական ֆաշիստ»: Եղան նաեւ հետեւյալ կարգի նախազգուշացումներ. «Չափդ իմացիր, Թուրքիան մեծ պետություն է»: Ըստ երեւույթին թուրքական մամուլի սանձարձակությունները համապատասխանում են Թուրքիայի մեծությանը: Կարեւորը, սակայն, այդ սանձարձակությունները չեն, ոչ էլ թուրքական պետության այսպես կոչված մեծությունը: Ինչ վերաբերում է ՀՀ նախագահի պաշտոնում Ռոբերտ Քոչարյանի ընտրությանը, ապա դա Թուրքիայի հայկական քաղաքականության առումով հիրավի կարեւոր է: Հայաստանի ներքին գործերին միջամտելու փորձի լույսի տակ ոչ պակաս կարեւորվում է Իրֆան Ուլֆյուրի «Օրթադոդու» հանդեսի հուլիսի 8-ի համարում տեղ գտած հետեւությունը. «Թուրքիան պետք է ամեն ջանք գործադրի Քոչարյանին իշխանությունից հեռացնելու համար»:

Իշխանության հերթափոխի հետ Հայաստանն արդեն հստակեցրել է իր դիրքորոշումը Թուրքիայի նկատմամբ: Հետեւաբար թուրքական քաղաքականության վերանայման կարիք, որպես այդպիսին նա չունի: Դիրքորոշման հստակեցումը, սակայն, դեռ քաղաքականության վերջնական ձեւավորում չի նշանակում: Քանի որ Թուրքիան Հայաստանի վրա ճնշում գործադրելու հետ մեկտեղ չի հրաժարվում նրա ներքին գործերին միջամտելու մտադրությունից, ուստիեւ անհրաժեշտ է դառնում թուրքական քաղաքականության մշակումը կատարել ճնշումների եւ միջամտությունների համադրմամբ: Ի վերջո չմոռանանք, որ Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո Թուրքիայի անբարյացակամության դրսեւորումները սոսկ Հայաստանով չեն սահմանափակվում, այլեւ դրանք ցուցաբերվում են նաեւ ՀՀ նախագահի անձի նկատմամբ:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ԽՈՐՀՐԴԱԼԵԱԼՆԵՐ

Սադլեն Օլբրայթի կրծքազարդերի խաղաքաղաքականությունը

Զարմանալի չէ, որ Մադլեն Օլբրայթը ոսկեբռնական արդուզարդի սիրահար է: Սակայն պետք է ընդունել, որ լինելով աշխարհի ուժեղագույն երկրի պետական քարտուղարը, մադամ Օլբրայթն այնքան էլ սովորական կին չէ: Այդ իսկ պատճառով ոսկե զարդեղենի նկատմամբ նրա վերաբերմունքն այնքան էլ կանացի չէ:

Ամեն ինչ սկսվեց 1994-ին, երբ Օլբրայթը ՄԱԿ-ում Ամերիկայի ներկայացուցիչն էր: Հերթական անգամ սրվել էին Իրաքի հետ հարաբերությունները: Օլբրայթը բառացիորեն կրակահերթի տակ էր առել Սադդամ Հուսեյնին, ինչի համար իրաքյան մամուլից արժանացել էր «օձ» որակմանը: Եվ ահա, մի անգամ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահի հերթափոխվող պաշտոնում ընդունելով Իրաքի արտգործնախարար Թարիք Ազիզին, մադամ Օլբրայթն իր անունը կրող եւ կրծքին ամրացվող ցուցանակի փոխարեն ամրացնում է օձ պատկերող կրծքազարդ... Թարիք Ազիզը խայթված էր. նա հասկացել էր ակնարկը:

Այսպիսին են մադամ Օլբրայթի կրծքազարդերի դիվանագիտության ակունքները: Բանակցություններում նրա գործընկերները զրույցը սկսում են Օլբրայթի շեղ կրծքի վրայով մի թաքուն հայացք սահեցնելով: Եվ չի կարելի նրանց մեղադրել. բանակցողներն ուզում են գուշակել, թե ինչպիսին է տիկնոջ տրամադրությունը եւ ինչպես է նա մտադիր վարել զրույցը: Եվ վերջապես, Օլբրայթն ինքն է կոչ անում «Կարդացեք իմ կրծքազարդերով» «Կարդացեք իմ շուրթերով» ընդունված ձեւի փոխարեն:

Մի անգամ մադամ Օլբրայթը բանակցություններ էր վարում իր ֆրանսիացի գործընկերոջ Յուբեր Վեդրինի հետ: Ֆրանսիացին հայացքը սահեցնելով Օլբրայթի կրծքի վրայով, նկատում է փակցված մի զարդ, որն, իր կարծիքով, Կուտիդոնի պատկերն էր: «Խոցված» փարիզեցին ցնծում էր. ամերիկա-ֆրանսիական հարաբերությունները խիստ ձգված էին, իսկ Կուտիդոնը սիրո նշան էր: Մեծ էր մսյո Վեդրինի հիասթափությունը, երբ սիրո մեջ մադամ Օլբրայթի հետ ոչինչ չհաջողվեց: Մադամն անմեղորեն շարունակում էր պնդել, որ մեղավորը Փարիզն է եւ ոչ թե Վաշինգտոնը: Եթե ֆրանսիացին ավելի լավ ծանոթ լիներ առասպելաբանությանը, ապա Քերովբեին չէր շփոթի Կուտիդոնի հետ: Քերովբեն ոչ թե սիրո, այլ մաքրության, անմեղության խորհրդանիշն է:

Նաթանյահուի եւ Արաֆաթի հետ հանդիպելիս մադամ Օլբրայթը միշտ ոսկե աղավնի ներկայացնող մեծ կրծքազարդ է կրում: Դա Իսրայելի նախկին վարչապետ, մոլագարի գնդակից սպանված Յիցխակ Ռաբինի այրու Լեի Ռաբինի ընծան է: Խաղաղության աղավնին պատերազմից բզկտված Մերձավոր Արեւելքի համար հասկանալի խորհրդանիշ է: Բացի այդ, այն նաեւ Նաթանյահուի նկատմամբ թաքնված ակնարկ է պարունակում. չէ՞ որ Բիբին (Բենժամին Նաթանյահուն) շրջեց տարածաշրջանի խաղաղ կարգավորմանն ուղղված Ռաբինի քաղաքականության դեկը:

ԱՄՆ-ի պետքարտուղարը գործի բերումով ստիպված է բանակցել ոչ միայն օտարերկրյա դիվանագետների, այլեւ ամերիկացի օրենսդիրների հետ: Սա երբեմն ավելի բարդ է. կոնգրեսականներին չես վախեցնի ոչ ավիակիրներով, ոչ էլ հրթիռներով կամ արգելամիջոցներով: Այդ իսկ պատճառով Կապիտոլիում գնալիս Մադլեն Օլբրայթն իր կուրծքը զարդարում է ԱՄՆ-ի Կոնգրեսի շենքը պատկերող զարդով:

Ռուսներին շողոքորթելու կարիք չկա, գրում է «Մոսկովսկի կոմսոմոլեցը», ուստի Պրիմակովի կամ այլ բարձրաստիճան ռուս դիվանագետի հետ հանդիպելիս Օլբրայթը կուրծքը զարդարում է հսկայական ամերիկյան արծվով: Երբ որ դա էլ չի հերիքում, կամ էլ մադամը Իվանից ավելի շաս զիջումներ է պահանջում (օրինակ, ՆԱՏՕ-ի ընդարձակման հավանություն), ամերիկյան արծվի կողքին ամրացվում է եւս մեկը՝ Բեռի Սեմը, իր երկար աստղաձեւ ցիլինդրով:

Օլբրայթի նախորդներից միայն Ռեյգանի օրոք պետքարտուղար Ջորջ Շուլցն էր հրապուրված խորհրդանշական զարդերով: Սակայն Շուլցի արդուզարդը չուներ Օլբրայթի բազմազանությունը. Շուլցը միայն կրում էր վագրի պատկերով խորհրդազարդ: Սակայն դա «ուժի դիրքից» քաղաքականության խորհրդանիշ էր: Ուղղակի Շուլցն ավարտել էր Պրինսթոնի համալսարանը, որի գերբի վրա վագր է պատկերված: Ի դեմ, վագրի դաջվածք կարելի էր տեսնել նաեւ Շուլցի հետույքին: Սա եւս մեկ անգամ ապացուցում է, որ Շուլցը պրինսթոնյան վագրից չէր օգտվում ռուսական արջին եւ «չարիքի կայսրությանը» վախեցնելու համար: Հազիվ թե Շուլցը իջեցրած լինի իր տաբատը՝ Շեւարդնաձեին համոզելու համար Խորհրդային Միությունը:

Սակայն վերադառնանք Մադլեն Օլբրայթին: Վերջերս՝ նա սկսել է կրել մեղու պատկերող կրծքազարդեր: «Նյու Յորք թայմսի» լրագրող Սթիվեն Հոլանդերի կարծիքով, այս «խորհրդանիշը դեռեւս բացատրված չէ»: Սակայն կարծիք կա, որ Օլբրայթի կրծքի մեղուն մտրակի եւ մեղրաբլիթի քաղաքականության խորհրդանիշ է: Իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օլբրայթը ոչ միայն դիվանագետ է, այլեւ գիտնական, պատմաբան, արդա բացառված չէ նաեւ մեղվի պատկերման ավելի խոր բացատրություն:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

Թուրքիան ընդլայնել է գործարքը ԱՄՆ-ի լոբբիինգային ընկերության հետ

Օգոստոսի 13-ի «Հյուրրիյեթի» համարից տեղեկանում ենք, որ Թուրքիան երեք ամսով երկարաձգում է իր գործարքը Փաթեն Բոգզ ընկերության հետ, որին արդեն վճարել էր 2 մլն դոլար մեկ տարվա ընթացքում Միացյալ Նահանգներում թուրքական լոբբիինգ իրականացնելու համար: Այժմ Թուրքիան պարտավորվել է վճարել եւս 500 հազար դոլար, եւ նոր գործարքը կսկսի գործել սեպտեմբերի 15-ից:

Պետնախարար Չավիք Կավակի ստորագրած գործարքի համաձայն, Փաթեն Բոգզը խորհրդակցական ծառայություն կմատուցի բոլոր իրավական հարցերում, տնտեսական եւ առեւտրային խնդիրներում, Թուրքիան կներկայացնի բոլոր իրավական խնդիրներում, կբարելավի Թուրքիայի կարերը հասարակության եւ կառավարության, ինչպես նաեւ միջազգային գործարար կազմակերպությունների հետ, կներկայացնի առեւտրային նախագծեր:

Վաշինգտոնի պաշտոնական տվյալների համաձայն, անցած մեկ տարվա ընթացքում լոբբիինգային ընկերությունը ձեռք է բերել որոշակի համաձայնություններ թուրքական պաշտոնյաների ԱՄՆ ժամանման եւ նրանց ընդունումը կազմակերպելու համար: Թերթը գրում է, որ վերջին ժամանակներում որոշակի թերություններ էին նշմարվել ընկերության աշխատանքում, եւ թուրք որոշ պաշտոնյաներ դեմ էին նոր երեքամսյա գործարքին: Սակայն գործարքը թարմացվեց՝ պայմանով, որ Փաթեն Բոգզը կհամագործակցի այլ լոբբիինգային ընկերության հետ:

Փաթեն Բոգզը, որը հայտնի է որպես լավ իրավաբանական ընկերություն, սակայն ոչ մեծ լոբբիինգային փորձով, վարչապետ Մեսութ Յըլմազի բարեհաճությունն է վայելում:

ՀԱՄԱՌՈՏ

Պիտակ տունը չի ընդունում Ելցինի խնամադատությունը

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 22 ՕԳՈՍՏՈՍ, ՍՆԱՐՔ. Բլինթոնի վարչակազմը չի կարող համաձայնել ԱՄՆ-ի՝ Սուդանին ու Աֆղանստանին հասցրած հարվածների հարցում Ռուսաստանի քննադատությանը: Այդ մասին հայտնել է Պիտակ տան մամլո քարտուղար Մայքլ Մաքքերին: «Մենք համամիտ չենք նախագահ Ելցինի հետ եւ կարծում ենք, որ չի կարելի բանակցել ահաբեկիչների հետ», հայտնել է նա, ընդգծելով, որ ամերիկյան վարչակազմը իրեն իրավունք է վերապահում որոշ դեպքերում գործել առանց այլ երկրներին զգուշացնելու:

Սուդանը «ամերիկյան նոր հարված» է սպասում

ԿԱՀԻՐԵ, 24 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սուդանի նախագահ գեներալ Օմար ալ Բաշիրը հայտարարել է, թե ինքը սպասում է, որ «ամերիկյան նոր հարված» կհասցվի իր երկրին, որի նպատակն է աղակայունացնել իրադրությունը եւ Խարթումի իշխանություններին ստիպել փոխելու քաղաքական գիծը: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, Սուդանի ղեկավարը, կիրակի օրը Խարթումում ելույթ ունենալով լրագրողների առջեւ, այն համոզմունքն է հայտնել, որ Նայրոբիում եւ Դար ես Սալամում ԱՄՆ-ի դեսպանությունների դեմ ձեռնարկված ահաբեկչական գործողություններից հետո ամերիկացիները գլուխները կորցրել են եւ այժմ աղարդյուն փորձեր են անում համաշխարհային հանրությանը համոզել, թե Սուդանն է մեղսակից արյունոտ իրադարձություններին: Ըստ ալ Բաշիրի, «Խարթումի արվարձանում գտնվող դեղորայքի ֆաբրիկայի վրա ձեռնարկված հարձակման համար Վաշինգտոնի բերած պատվակները կասկածներ են հարուցում ոչ միայն ողջ աշխարհում, այլեւ նույնիսկ բուն Միացյալ Նահանգներում»: «Մենք ամբողջ աշխարհի առաջ ցույց կտանք, որ ամերիկյան նախագահը հերթական անգամ սխեց: Մեր հիմնական նպատակն է ապացուցել, որ ամերիկյան նախագահը եւ նրա վարչակազմը սուտ են», ավելացրել է նա:

Օգոստոսի 8-20-ը թալիբները սպանել են ավելի քան 10 հազար մարդու

ԹԵՀՐԱՆ, 22 ՕԳՈՍՏՈՍ, ՍՆԱՐՔ: Օգոստոսի 8-20-ը Աֆղանստանի հյուսիսում, Մազարի-Շարիֆ վարչական կենտրոնում, թալիբները սպանել կամ մահապատժի են ենթարկել ավելի քան 10 հազար մարդու: Այդ մասին հայտնում է ԻՐՆԱ գործակալությունը՝ վկայակոչելով հակաթալիբյան դաշինքի լիդերներից մեկին՝ Աբդուլքարիմ Հալալին: Արյունոտ սպանդի զոհ են դարձել հիմնականում հյուսիսային դաշինքի կողմնակից ուզբեկները, տաջիկները, նաեւ փուշտունները: Հալալիի կարծիքով, ներաֆղանական հակամարտությունը վերածվել է ազգամիջյանի, երբ փուշտու թալիբները, հակադրվելով ազգային փոքրամասնություններին, սկսել են կոտորել Աֆղանստանի հյուսիսային շրջանների ոչ փուշտու բնակչությանը:

ՖՐԱՆՍԻԱ

Նախ վճարիր, ապա բողոքիր

Անցյալ տարի ամբողջ Ֆրանսիայում կարգազանց վարորդների նկատմամբ միլիոնավոր արձանագրություններ են կազմվել: Հենց միայն Փարիզի ոստիկանությունը քաղաքի փողոցներում ավտոմեքենաների կայանման կանոնները խախտած վարորդների նկատմամբ 8 227 431 արձանագրություն է կազմել: Եվ ինչպես միշտ, վարորդների մեծամասնությունը չի վճարել տուգանքը: Ֆրանսիացի ավտովարորդները, հատկապես փարիզցիներն ըստ երեւույթին իրենց պատվի գործն են համարում ոստիկանության արձանագրությունների վճարումից խուսափելը: Կարգազանց վարորդներից մեկն անցյալ տարվա դեկտեմբերին նույնիսկ գործնական ուղեցույց հրապարակեց «Արձանագրության գումարը չվճարելու եղանակները» սադրիչ վերնագրով:

Այս իրավիճակը լրջորեն մտահոգում է արդարադատության նախարար էլիզաբեթ Գիգուին, որը վերջերս հայտարարեց, թե 1994 թ. Փարիզում կայանման կանոնները խախտած կարգազանց վարորդները վճարել են 16 մլրդ ֆրանկի հասնող տուգանքների ընդհանուր գումարի միայն 25 տոկոսը: «Պուենե» հանդեսի հաղորդման համաձայն, կարգազանց վարորդների այս վարքագիծը բացատրվում է նրանով, որ ներկայումս գործող օրենսդրության համաձայն, տուգանված վարորդն իրավունք ունի տուգանքը վիճարկել այն վճարելուց առաջ: Նկատի ունենալով վիճարկվող արձանագրությունների վիթխարի քանակությունը եւ տուգանքի վճարման համեմատաբար սեղմ ժամկետները (ընդամենը 1 տարի), անբարեխիղճ վարորդները հեշտությամբ խուսափում են տուգանքի վճարումից: Դրա հետեւանքով խոշոր քաղաքների ոստիկանական ծախսերը գրկվում են անհրաժեշտ գոյամիջոցներից:

Դրությունը բարելավելու եւ պետական գանձարանի եկամուտները ավելացնելու նպատակով նախարար էլիզաբեթ Գիգուն մտադիր է փոխել սխալ կայանման հետ կապված տուգանքների վճարման կարգը: Արձանագրություններն այսուհետեւ կոչվելու են «ճանապարհի սխալ զբաղեցման պարտեր»: Այսուհետեւ կարգազանց վարորդները կկարողանան փաստերը վիճարկել միայն տուգանքի վճարումից հետո: Արդարադատության նախարարության պաշտոնյաների կարծիքով, այս փոփոխության շնորհիվ հնարավոր կլինի հեշտությամբ կրկնապատկել տուգանքների գումարների վճարման տոկոսը: Ներկայումս նոր նախագիծը դեռեւս քննարկվում է նախարարությունում: Դրա ընդունման դեպքում այն կհաստատվի որպես սովորական դեկրետ եւ հարկ չի լինի Ազգային ժողովում քննարկում անցկացնել օրենքն ընդունելու համար:

Ադրբեջանը եւ Սանկտ Պետերբուրգը համագործակցության պայմանագիր ստորագրեցին

ԲԱԿՈՒ, 24 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բաքվում ստորագրվել է համաձայնագիր Ադրբեջանի եւ Սանկտ Պետերբուրգի կառավարությունների միջեւ: Այն նախատեսում է կողմերի համագործակցություն առեւտրատնտեսական, գիտատեխնիկական եւ մշակութային բնագավառներում: Միաժամանակ ստորագրվել է համաձայնագիր Բաքվի եւ Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքի վարչակազմերի համագործակցության մասին:

Արարողությանը նախորդել են Ադրբեջանի մի շարք պաշտոնատար անձանց հետ նահանգապետ Վլադիմիր Յակովլեւի բանակցությունները, որն անցյալ ուրբաթ ուշ երեկոյան այստեղ է ժամանել՝ գլխավորելով ներկայացուցչական պատվիրակությունը:

Հ. Ալիեւի հետ կայացած հանդիպման ընթացքում ռուսաստանցի նահանգապետը Ադրբեջանի պետության ղեկավարին առաջարկել է օգտագործել իր քաղաքի նավաշինական ճյուղի հնարավորությունները, որը, նրա հավաստմամբ, այժմ ավելացնում է իր հզորությունները եւ պատվերներով ապահովված է մինչեւ 2002 թվականը:

Ինչպես հավաստի աղբյուրներից հայտնի է դարձել ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին, Վլադիմիր Յակովլեւը Բաքվում քննարկել է նաեւ Կասպից ծովի ափամերձ ծանծաղուտում արդյունահանվող ադրբեջանական նավթը Վոլգա-Բալթյան ուղիով դեպի Սանկտ Պետերբուրգ փոխադրելու եւ այնուհետեւ համաշխարհային շուկաներ հասցնելու հարցերը: Կողմերի փոխհարաբերությունների ներկայիս մակարդակը բնորոշվում է հիմնականում Սանկտ Պետերբուրգի մեքենաշինական գործարանների արտադրանքի, էլեկտրաշարժիչների եւ ձկան Ադրբեջան արտահանմամբ, իսկ հակառակ ուղղությամբ՝ գինու-օղու արտադրանքի, սարքերի եւ բժշկական սարքավորումների ներմուծմամբ:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Հայ արեւելագետի աշխատությունն արաբերեն

1998 թ. Բեյրութի «Գիտական հետազոտությունների եւ վավերագրության արաբական կենտրոնը» լույս ընծայեց հայ արեւելագետ, պատմական գիտությունների թեկնածու Ալեքսանդր Խաչատրյանի արաբերեն նոր «Սիլու ալ-ֆութուվվա վ-ալ-ֆիթյան ֆի ալ-մուջթամա ալ-իսլամի» («Ասպետական միությունները (ֆութուվվա) եւ կտրիճները իսլամական հասարակության մեջ») խորագրով աշխատությունը (173 էջ): Դա արվել է ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտում:

Սենագրությունը կազմված է ներածությունից, առաջաբանից եւ ինը գլուխներից: Գիրքը սկսվում է Հայ դատի նվիրյալ պաշտպան, արաբ պատմաբան Նայեֆ Ջաֆր ադ-Դինի ներածական խոսքով, ուր գնահատվում են աշխատությունն ու հիմնահարցերի գիտական լուսաբանումը:

Աշխատությունը գրվել է աղբյուրագիտական եւ բազմալեզու գիտական գրականության հարուստ հենքի վրա:

Առաջաբանում հեղինակն անդրադառնում է «ֆութուվվա» կազմակերպությունների գաղափարախոսությանը, հասարակական-քաղաքական դերին, սոցիալական շերտավորումների, կրոնադավանական կազմի ու դրանց քայքայման խնդիրների ուսումնասիրության վիճակին:

Ուսումնասիրելով պատմական սկզբնաղբյուրների (գլխավորապես արաբական) եւ արաբական հարուստ պոեզիայի նյութերը հեղինակը հանգում է այն եզրակացության, որ բազմիմաստ «ֆութուվվա» տերմինը նախաիսլամական եւ վաղ իսլամական ժամանակաշրջաններում «ֆիթյանների» (եզ. «ֆաթա» երիտասարդ) «պատվի վարքականոն» էր եւ ընդգրկում է մարդկային առաքինությունների ամբողջական համալիր:

«Ֆութուվվա» հասկացությունը որպես երիտասարդ տղամարդու իդեալ, արաբական մատենագրության մեջ ձեւավորվում է 8-րդ դարում եւ հակակշռում էր հասուն տղամարդու «մուրուվվա» իդեալին:

Անդրադառնալով 9-10-րդ դարերում «ֆութուվվայի» կազմակերպությունների հետագա գործունեությանը հեղինակը նշում է, որ Աբբասյան խալիֆայության քաղաքական տիրապետության թուլացման, իսլամական հասարակության ընդգծված շերտավորման, հասարակական անարդարությունների, անիշխանության եւ օտար տարրերի տիրապետության հաստատման պայմաններում արմատական փոփոխություններ են տեղի ունենում նաեւ «ֆութուվվայի» կազմակերպությունների գաղափարախոսության, նրանց անդամների քաղաքական հայացքների եւ համոզմունքների եւ, ի վերջո, սոցիալական կազմի մեջ: Այդ կազմակերպությունների անդամները որոշակի նպատակների համար կապի մեջ են մտնում հասարակական այլ խավերի ու խմբերի հետ, որի հետեւանքով նրանց հետագա գործունեությունը հասարակական-քաղաքական լայն հնչեղություն է ստանում, շեշտակի բարձրանում են նրանց համբավն ու հեղինակությունը իսլամական հասարակության ստորին խավերի մեջ, աստիճանաբար վերածվում են կազմակերպված քաղաքական լուրջ ուժի, որի հետ հաշվի էին նստում տեղական իշխանությունները: 10-11-րդ դարերում «ֆութուվվայի» կազմակերպությունների անդամներն արդեն ներկայացնում էին հասարակական ընդդիմությունը կառավարող իշխանությունների հանդեպ, հաճախ հանդես գալով տարբեր անուններով: Իրաքի եւ Իրանի քաղաքներում նրանք կոչվում էին «այյար» կամ «ջավանմարդան», Սիրիայի քաղաքներում (Դամասկոս, Հալեպ) «Սիդաս», Միջին Ասիայի քաղաքներում «Ջավանան», «այյար», իսկ Կովկասի եւ Փոքր Ասիայի քաղաքներում «ավսի», կամ «ֆիթյան»:

Հեղինակն արդարացիորեն նշում է, որ «այյարֆիթյանների» շարժումը նախնական փուլում «աշխարհի երջանիկների» դեմ ուղղված բողոքի եւ դժգոհության յուրատեսակ երեւույթ էր, որը Միջին Արեւելքի քաղաքներում իր շուրջը համախմբեց ընչազուրկ ու աղքատ խավերին: Նրանց ելույթները բնորոշվում էին սարեւայնությամբ եւ հանկարծակի պոռթկմամբ, որը յուրահատուկ էր միջնադարյան բոլոր սոցիալական շարժումներին:

Աշխատությունում Ա. Խաչատրյանը լուսաբանում է «ֆիթյանների» ու «այյարների» կապերը խալիֆայության սահմանամերձ շրջաններում (Միջին Ասիա, Փոքր Ասիա) «հեթանոսների ու այլահավատների» դեմ կրոնական պատերազմ (ջիհադ) մղող «դազիների» (մարտիկների) հետ:

Նա իրավացիորեն նկատել է, որ այս հարցի շուրջ խառնաշփոթ կա մասնագիտական գրականության մեջ: Որոշ հետազոտողներ «ֆիթյան-այյարներին» հաճախ նույնացնում են սահմանամերձ գոտիներում իսլամի դրոշի ներքո մարտնչող «դազիների» հետ: «Ֆիթյանները» եւ «այյարները» հիմնականում պայքարում էին արաբական խալիֆայության մեջ մտնող քաղաքներում եւ գյուղերում, բայց երբեմն կամավորական ջոկատներ էին կազմում եւ «դազիների» հետ մասնակցում «սրբազան պատերազմին» խալիֆայության ծայրամասերում «անհավատների» (քրիստոնյաների) եւ հեթանոս թուրքերի դեմ:

Աշխատությունում լուսաբանվում են նաեւ «ֆիթյանների» կազմակերպությունների եւ մահմեդական «սուֆի» (միստիկ) միաբանությունների կապերը: Հեղինակի պրպտումներն այս ուղղությամբ ցույց են տալիս, որ 11-րդ դարից սկսած «ֆիթյանների» կազմակերպությունները կապեր էին հաստատել սուֆիական շեյխերի հետ, որոնք ժամանակի ընթացքում մեծ ազդեցություն ներգործեցին նրանց հայացքների վրա:

Ֆիթյանների կազմակերպության ներսում առաջացած գույքային անհավասարության եւ շերտավորման հետեւանքով շատ «ֆիթյաններ» առեւտրա-արհեստավորական ասպարեզում գործնական նպատակներին չհասնելով, գերադասեցին նվիրվել ճգնավորական կյանքին, հրաժարվելով սոցիալական դրայքարից եւ իրենց գործունեությունը շարունակեցին սուֆիական տարբեր միաբանությունների մեջ: Անդրադառնալով Փոքր Ասիայի եւ Հայաստանի որոշ քաղաքներում ստեղծված «ֆիթյանների» կազմավորումների գործունեությանը, Ա. Խաչատրյանը նշում է, որ այս տարածաշրջանի քաղաքներում 13-14-րդ դարերում ծաղկեցին «ֆութուվվայի» կազմակերպությունները, որոնք հայտնի էին «ախի» (ույգուրերեն եւ միջին թուրքերեն նշանակում է «վեհ», առատաձեռն մարդ) անունով: Հեղինակի կարծիքով, «ախիները» Իրանից Կովկաս եւ Միջին Ասիա են թափանցել սելջուկյան հայտնի արշավանքներից հետո (11-12-րդ դդ.), որոնց կազմակերպությունները համալրվում էին գլխավորապես արհեստավորներով: Այս կազմակերպությունների դերն ու նշանակությունը շեշտակի բարձրանում է 13-րդ դարի կեսերից սկսած, երբ տրոհվեց Փոքր Ասիայի Ռումի սելջուկների սուլթանությունը եւ փոքրասիական քաղաքների անիշխանության պայմաններում «ախի-ֆիթյանները» հաճախ իրենց ձեռքն էին վերցնում տեղի իշխանությունը եւ ստանձնում բարձր պաշտոններ:

ԱՐՇԱԿ ՓՈԼԱՊՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ՄՆՑԱԽԱՊ

12 տարի անց... Լեւոն Իվանյան

երկարատեւ ընդմիջումից հետո Լեւոն Իվանյանը կրկին բարձրացավ բեմ: Թատրոնից հեռանալը, ինչպես պատճառաբանեց դերասանը, կապված էր 1985 թ. Մոսկվայի համախորհրդային երիտասարդության 12-րդ փառատոնում ներկայացված մնջախաղային ծրագրի հետ: Բեմադրությունը կառուցվել էր Պարույր Սեւակի «Այր մի Մաշտոց անուն» պոեմի հիման վրա: Այն շոշափում էր ազգային հարցեր, որը եւ ճակատագրական դարձավ դերասանի համար: 13 ներկայացումներից հետո նրան արգելում են շարունակել: Դա Լեւոն Իվանյանի վերջին բախումնային ելույթն էր ՀԼԿԵՄ-ի կենտկոմի եւ մշակույթի նախարարության հետ:

Այսօր Լեւոն Իվանյանը կրկին բեմում է եւ հանդես է գալիս «12 տարի անց» մենաներկայացումով: Ի դեպ, ինչպես նշեց Յունեսկոյի հայ դաշինքի կենտրոնի մնջախաղի բաժնի կոորդինատոր Արքուր Թումասյանը, 1998 թ. Հայաստանում հայտարարված է մնջախաղի տարի: Ժամանակակից մնջախաղի հիմնադիր Էյթեն Դեկրուի ծննդյան 100-ամյակի առթիվ, որը նշվում է ամբողջ աշխարհում:

ՆԱԻՐԻ ԵՂԻԳԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Ժողովրդական նկարիչ Սուրեն Սաֆարյանը օգոստոսի 21-ին կլիներ 75 տարեկան

Օգոստոսի 21-ին լրացավ Հայաստանի Ժողովրդական նկարիչ, Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի պրոֆեսոր Սուրեն Սաֆարյանի ծննդյան 75 տարին, որը կյանքին հրաժեշտ է տվել տասը տարի առաջ, ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում:

Սուրեն Սաֆարյանը ծնվել է Բաքվում, արմատներով ղարաբաղցի նկարչի ընտանիքում: Հայրը երեւի բոլորից լավ կռահելով, թե ինչպիսի ճակատագիր է սպասում հայերին այդ քաղաքում, ընտանիքը երեւան է տեղափոխել, երբ ապագա նկարիչն ընդամենը հինգ տարեկան էր:



Դեռ նկարիչ չդարձած, դեռ Երեւանի գեղարվեստի ուսումնարանի ուսանողական նստարանին, 19-ամյա ապագա արվեստագետը մեկնում է Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատ, կռվում, վիրավորվում, ապաքինվում զինվորական հիվանդանոցներում:

Պատերազմը խորը հետք է թողել Սաֆարյանի ստեղծագործության մեջ, եւ պատահական չէ, որ անգամ պատերազմից հետո ժամանակներում այդ թեման մշտապես առկա է եղել նրա կտավներում: Եվ դրանց կողքին էլ՝ խորհրդային սարդն ու սրա տասասակները: Սուրեն Սաֆարյանը խորհրդային շրջանի նկարիչ էր, սակայն դա չխանգարեց նրան հիմնադրելու մեկական աշխատանքի ցուցահանդես հենց այդ խորհրդային տարիներին, ցուցահանդես, որի մասնակիցը կարող էր ցուցադրել այն, ինչ ուզում էր՝ առանց գլավլիտի կամ կենտկոմի համաձայնության: Նրա ղեկավարման տարիներին էր, որ «լույս աշխարհ» եկան հայկական կերպարվեստի զարմանալի 60-ականները:

Սուրեն Սաֆարյանը այդ առաջընթացներն իրականացրեց, երբ կանգնած էր Հայաստանի նկարիչների միության նախագահի ղեկի մոտ (1969-1982 թթ.): Եթե դրան գումարենք նաեւ, որ նա Հայաստանի նկարիչների միության քարտուղար է եղել 1956 թվականից, նախագահի տեղակալ 1959-ից եւ պատասխանատու քարտուղար 1964-ից, ապա կարելի է ասել, որ հայկական կերպարվեստի զարգացողների առաջին շարքերում քայլողներից է եղել ավելի քան երեք տասնամյակ:

Սուրեն Սաֆարյանի աշխատանքները բազմիցս ցուցադրվել են Հայաստանում եւ աշխարհի տարբեր երկրներում, նա բացել է անհատական ցուցահանդեսներ եւ մասնակցել խմբակայիններին, արժանացել բազմաթիվ պարգեւների, ճանաչվել արվեստագետ ընկերների կողմից:

Ճանաչվել է նաեւ որպես ազնիվ ընկերաց եւ աստվածավորություն, որն իր բարությունն է բաժանել ընկերներին, բարեկամներին, արվեստակից հեղինակներին:

ՎԱՆԻԿ ՄԱՆԹՐՅԱՆ
Արմենպրեսի թղթակից
«Ազգի» համար

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Ժողովրդական հեքիաթների նոր ժողովածու

Ընթերցողին հայտնի են հայ ժողովրդական հեքիաթների ժողովածուների բազմաթիվ հրատարակություններ, այդ թվում գրողների, բանագետների ու ասմունքողների մշակումներ: Սակայն առավել հարուստ է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի նախաձեռնությամբ լույս ընծայված «Հայ ժողովրդական հեքիաթների» բազմահատորյակը, որի առաջին հատորը ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ընդհանուր խմբագրությամբ հրատարակվել է շուրջ 40 տարի առաջ: Այն ընդգրկում է Աշտարակի եւ Կոտայքի շրջանների հեքիաթները, որոնք տարիներ առաջ լույս են տեսել ազգագրական ժողովածուներում եւ հանդեսներում: Մատենաշարի երկրորդ հատորի հեքիաթները վերաբերում են էջմիածին քաղաքին: Գերակշռող մասը հավաքել եւ գրի է առել բանահավաք Տիգրան Նավասարդյանը:

Հետագա տարիներին լույս տեսած ժողովածուների նյութերը պատրաստել են Մարգիս Հայկունին, Ալեքսանդր Մխիթարյանը, Մարգարիտ Գրիգորյանը, Նազարեթ Մարտիրոսյանը, Մահակ Մովսիսյանը եւ ուրիշներ: Դրանք Շիրակ, Բասեն, Ջավախք, Արցախ, Գանձակ-Տավուշ-Սյունիք, Գուգարք, Տուրուբերան, Ալաշկերտ եւ այլ բնակավայրերի հեքիաթներն են:

1959-1985 թվականներին հրատարակությունը ընթերցողին ներկայացրեց 13 գիրք: Երկար տարիների դադարից հետո վերջերս լույս տեսավ մատենաշարի 15-րդ հատորը («Ամրոց» հրատարակչ. 1998-512 էջ): Գիրքը հրատարակության է պատրաստել Վերժինե Սվազլյանը, գլխավոր խմբագիրն է Արշաքես Նազինյանը: Հատորում ամփոփված են Վան-Վասպուրականի հեքիաթները, որոնք գրի են առել Երվանդ Լալայանի խմբարարավի մասնակիցները 1915-16 թվականներին Հայաստանում եւ Անդրկովկասում աղաստանած Վանի հայ գաղթականներից: Գրառման վայրերն են Երեւանը, Ալեքսանդրապոլը, Թիֆլիսը, գրառողները՝ Երվանդ Պեզազյանը, Արշաքես Բարսեղյանը, Սենեքերիմ Շալճյանը, Եղիշե Վարդանյանը եւ Շահեն Կուժիկյանը: Հեքիաթների լեզուն մնացել է անփոփոխ, իսկ ուղղագրությունը նորն է:



Հատորն ունի ասացողների, գրառողների եւ դժվար հասկանալի ու փոխաբերական բառերի ցանկեր:

Տպագրության ընթացքում է մատենաշարի 14-րդ հատորը: Իսկ սույն 15-րդ հատորը կարելի է ձեռք բերել Երեւանի գրախանութներից (Հանրապետ. հրապարակ, Մաշտոցի պող. 45)

ՀՐԱՉՅԱ ՀՈՒՆԱՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ԹԵԹԵՎ ԱՍԼԵՏԻԿԱ

Եվրոպական առաջնությունն ավարտվեց

Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում ավարտվեց Եվրոպայի հերթական 17-րդ առաջնությունը: Մրցումներում հանդես եկան աշխարհամասի 44 երկրների 1330 մարզիկ-մարզուհիներ:

Ինչպես եւ սպասվում էր, հիմնական պայքարն ընթացավ Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի եւ Ռուսաստանի թեթեւատլետների միջեւ: Ռուսաստանի ներկայացուցիչները լավ սկսեցին մրցումները, սակայն հետագայում փոքր-ինչ զիջեցին, որից հետո առաջ անցան մրցակիցները: Իրոք այս երեք հավաքականները զգալիորեն գերազանցեցին մյուս թիմերին:

Ինչպես միշտ, հետաքրքիր անցան փոխանցումավազքերը: Կանանց 4X100 մ վազքում կրկին ամեն ինչ խառնեց Ֆրանսիայի հավաքականը, ավելի ճիշտ նրա առաջատար Քրիստին Արոնն: Եզրագծում նա արընթաց առաջ անցավ մրցակցուհիներից, եւ Ֆրանսիայի թիմակը դարձավ Եվրոպայի չեմպիոն: Արծաթե եւ բրոնզե պարգեւները բաժին հասան համապատասխանաբար Գերմանիայի եւ Ռուսաստանի մարզուհիներին:

Այս վերջին երկու թիմերի միջեւ էլ ընթացավ պայքարը 4X400 մ փոխանցումավազքում: Համարյա ամբողջ մրցաշարածությունում առջեւում էին Ռուսաստանի մարզուհիները, սակայն վերջում ավելի արագ գտնվեցին գերմանուհիները, որոնք էլ նվաճեցին ոսկե մեդալները:

Անցյալ տարի սպասած ծանր վնասվածքի հետո կրկին մեծ սպորտ վերադարձավ նշանավոր արագավազորդուհի Իրինա Պրիվալովան: Թեեւ ռուս մարզուհին Բուդապեշտում արդեն արծաթե մեդալ էր նվաճել 100 մ վազքում, այնուամենայնիվ, երկու անգամ ավելի երկար մրցաշարածությունում նրա նվաճած չեմպիոնական ոսկին խոշոր անակնկալ համարվեց: Պրիվալովան հաղթեց 22.62 վրկ արդյունքով:

Ռուսաստանցի մարզիկներից իրենց բարձր կարգը հաստատեցին Սլանտայի օլիմպիադայի կրկնակի չեմպիոնուհի Սվետլանա Մաստերկովան եւ Բարսելոնի օլիմպիադայի չեմպիոն Մախիմ Տարասովը: Մաստերկովան վստահ հաղթանակ տարավ 1500 մ վազքաշարածությունում, Տարասովը ծողացատկում:

Վազքային մարզաձեւերի մասին մեր խոսքն ավարտենք ամենաերկար մարաթոնյան վազքի հաղթողներին նշելով:

Տղամարդկանց մրցապայքարում բացառիկ դեպք արձանագրվեց. պատվանդանի բոլոր երեք աստիճանները զբաղեցրին իտալացի մարաթոնիստները: Իսկ Հին աշխարհի չեմպիոնի կոչումը նվաճեց Ստեֆանո Բալդինին, որը 42 կմ 195 մ մրցաշարածությունն անցավ 2 ժամ 12 րոպե 01 վայրկյանում:

Նույն մրցաձեւում կանանցից հաղթող դարձավ պորտուգալուհի Մանուելա Մաչադոն: Եվրոպայի նոր չեմպիոնուհին կարողացավ առաջ անցնել ուրիշ ուժեղ մարզուհիներից եւ դժվարին մրցաշարածությունն ավարտել աշխարհամասի նոր ռեկորդով 2 ժամ 27 րոպե 10 վայրկյան:

Հետաքրքրությամբ էին սպասվում տղամարդկանց եռացատկի մրցումները: Աշխարհի ռեկորդակիր Ջոնաթան Էդվարդսը (Մեծ Բրիտանիա) ցույց տվեց շատ բարձր արդյունք՝ 17 մ 99 սմ եւ հաղթեց վերջին ժամանակներս իր հիմնական մրցակից Դենիս Կապուստինին (Ռուսաստան), որը արծաթե մեդալի արժանացավ:



Սվետլանա Մաստերկովա

Մարզական խաղերի եւ աշխարհի առաջնությունների ոսկե մեդալներ է նվաճել 50 կմ մրցաշարածությունում: Այս մրցաձեւում նրան պակասում էր միայն Եվրոպայի չեմպիոնի ոսկե մեդալը: Լեհ մարզիկի երազանքն իրականացավ: Նա գրավեց առաջին տեղը ցույց տալով 3 ժամ 43 րոպե 51 վայրկյան արդյունք: Արծաթե եւ բրոնզե մեդալները նվաճեցին համապատասխանաբար Վալենտին Կովալենկոն (Ֆինլանդիա) եւ Անդրեյ Պլոտնիկովը (Ռուսաստան):

Երկրներ եւ մեդալներ

	Ո	Ա	Բ	Ը
Մեծ Բրիտանիա	9	4	3	16
Գերմանիա	8	7	8	23
Ռուսաստան	6	9	7	22
Լեհաստան	3	4	1	8
Ռումինիա	3	2	2	7

Ջոնաթան Էդվարդս

ԹԵՆԻՍ

Մոնիկա Սելեշի չորրորդ հաղթանակը

Օգոստոսի վերջին օրը կմեկնարկի «Մեծ սաղավարտ» շարքի վերջին մրցաշարը ԱՄՆ-ի բաց առաջնությունը: Աշխարհի ուժեղագույն թենիսիստների համար դրան նախապատրաստվելու հիանալի հնարավորություն ընձեռեցին նախորդող մրցաշարերը:

Ինդիանապոլիս քաղաքում անցկացված մրցումների եզրափակիչ խաղում հանդիպեցին Անդրե Ագասին (ԱՄՆ) եւ Ալեխ Կարեցյան (Իսպանիա): Վերջինս կարողացավ 2-6, 6-2, 6-3 հաշվով պարտության մատնել իր ահեղ մրցակցին եւ տիրել գլխավոր մրցանակին: Ներկաները նշում են Ագասիի վեհանձն վարքը: Երբ առաջին մրցափուլի վերջում նրա ուղարկած գնդակը դիպավ իսպանացի թենիսիստին ու վայր գցեց նրան, առաջինը մոտ սլացավ եւ օգնություն ցույց տվեց Ագասին: Դրանից հետո Կարեցյան կերպարանափոխվեց ու իր օգտին ավարտեց հաջորդ երկու մրցափուլերը:

ԱՄՆ-ի մեկ այլ քաղաքում Նյու Հեյվենում ավարտված մրցաշարի վճռական հանդիպումը փոքր-ինչ անսպասելի ավարտ ունեցավ: Ամբողջ մրցաշարածությունը վերելքով անցկացրած խորվաթ թենիսիստ Գորան Իվանիշեւիչը (կիսաեզրափակիչում նա վստահորեն պարտության էր մատնել նաեւ նախորդ տարվա նույնանուն մրցաշարի հաղթող, ռուսաստանցի Եվգենի Կաֆելնիկովին) զիջեց սլովակ Կարոլ Կուչերային: Վերջինս եզրափակիչ խաղը շահեց 6-4, 5-7, 6-2 հաշվով: Թերեւս, Նյու Հեյվենում տարած հաղթանակը սլովակ թենիսիստի ամենախոշոր հաջողությունն է նրա մարզական կարիերայի ընթացքում:

Կանանց խոշոր մրցաշար ավարտվեց Կանադայի Մոնրեալ քաղաքում: Ի տարբերություն տղամարդկանց, մի տեղ էին հավաքվել աշխարհի բոլոր ուժեղագույնները:

Եզրափակիչ խաղում հաղթողի կոչումը վիճարկեցին ամերիկուհի Մոնիկա Սելեշը (նա կիսաեզրափակիչում պարտության էր մատնել աշխարհի թիվ մեկ թենիսիստուհի, շվեյցարուհի Մարտինա Հինգիսին) եւ իսպանուհի Արանչա Սանչես-Վիկարիոն (նա հաղթել էր չեխուհի Յանա Նովոտնային): Սպասվածին հակառակ, Սելեշը հաղթեց առանց մեծ դժվարությունների: Այդ է վկայում նաեւ հանդիպման հաշիվը՝ 6-3, 6-2: Նշենք, որ Մոնրեալի մրցաշարում Մոնիկան հաղթում է արդեն 4-րդ անգամ: Ինչպես ինքն է ասում, մթնոլորտը խաղահրապարակում եւ նրանից դուրս շատ ջերմ, բարեկամական է եւ նպաստում է հաջող խաղալուն:

Ավելացնենք, որ Մոնրեալում մրցանակային հիմնադրամը 1 մլն 300 հազար դոլար էր, ինչը հազվադեպ է կանանց մրցումներում:



Մոնիկա Սելեշ

ՈՒԵՆՃՅՈՒ

Աջակցե՛ք աշխարհի առաջնությանը

RENJU WORLD Team Championship

Ռենձյուն ունի ավելի քան 4000 տարվա պատմություն: Աշխարհագրորեն իրարից հեռու մի շարք երկրներում այն ազգային է համարվում: Մեզ մոտ հայտնի է «կես-խաչ» կամ «խաչ-գրո» անուններով: Ռենձյուն իր ուրույն տեղն ունի մարզաստամաբանական խաղերի շարքում՝ չնայած կանոնների եւ գույքի առումով ամենապարզն է:

Նրանք, ովքեր պարապում են ռենձյուի խմբակներում, տեսնում են այն բարերար ազդեցությունը, որ նա թողնում է մտավոր ու հոգեւոր զարգացման վրա:

Ուղիղ մեկ տարի առաջ Սանկտ Պետերբուրգում անցկացված Ռենձյուի միջազգային Ֆեդերացիայի գլխավոր ասամբլեան որոշեց աշխարհի հերթական թիմային առաջնությունն անցկացնել Երեւանում, 1998 թվականի սեպտեմբերի 10-17-ը: Առ այսօր Հայաստանում ոչ մի մարզաձեւից աշխարհի կամ Եվրոպայի մեծահասակների առաջնություն տեղի չի ունեցել: Ավելորդ է ասել, թե ցանկացած երկրի համար որքան պատվաբեր է որեւէ մարզաձեւից աշխարհի առաջնություն անցկացնելը: Ավելացնեմ, որ աշխարհի առաջնությունը այն անցկացնող երկրների համար (առավել եւս՝ Հայաստանի համար) շահավետ է տարբեր առումներով եւ, որպես կանոն, նաեւ շահութաբեր է:

Ռենձյուի թիմային առաջնության նախապատրաստական աշխատանքներում առնչվելով տարբեր կառույցների հետ՝ հանդիպում ենք խոչընդոտների: Այն, ինչ հնարավոր է անել մի քանի րոպեում, արվում է մի քանի շաբաթում: Եվ եթե չլիներ որոշ մարդկանց բարյացակամությունն ու խանդավառությունը, ապա մրցաշարը ձախողված կլիներ (առաջնությունից հետո կհրապարակենք օգնողների անունները): Գործող ֆիրմաներից, կազմակերպություններից ոմանց ինչ-որ բան խանգարում է, որ նրանք հասկանան՝ աշխարհի առաջնությանն աջակցելը կբարձրացնի նրանց ազգային ու միջազգային հեղինակությունը: Պարոնա՛յք, մենք սպասում ենք ձեր օգնությանը: Դրա չափը եւ ձեւը սահմանափակված չեն:

ԱԼԲԵՐՏ ՊՈՂՈՍՅԱՆ
ՀՀ ռենձյուի Ֆեդերացիայի
նախագահ, հեռակա խաղի
գծով աշխարհի չեմպիոն

Ջուհարյանի արծաթե մեդալը

Կահիրեում ավարտվեց հունահռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի երիտասարդական առաջնությունը: Մեր հանրապետության չորս մարզիկներից առավել հաջող հանդես եկավ Վահան Ջուհարյանը (56 կգ քաշային կարգ): Գյումրեցի 20-ամյա ըմբիշին առաջին իսկ գոտեմարտերում ուժեղ մրցակիցներ վիճակվեցին: Վահանն առաջին օրը մրցեց թուրք Իրֆան Դունդուրի հետ: Գոտեմարտի սկզբում հայ մարզիկը կողոսկրի վնասվածք ստացավ, սակայն չընկճվեց, շարունակեց պայքարը եւ արժանի հաղթանակ տարավ: Ջուհարյանն այնուհետեւ երկրորդ շրջանում գոտեմարտեց իրանցի Սիմեդ Ասկանի հետ եւ նրան եւս պարտության մատնեց: Նա հաղթանակով ավարտեց նաեւ երրորդ գոտեմարտը՝ Ուկրաինայի ներկայացուցիչ Իգոր Կուրիլոյի հետ: Աշխարհի չեմպիոնի կոչման համար գոտեմարտում Ջուհարյանը մրցեց ռուսաստանցի Նիկոլայ Անտոնենկոյի հետ: Ցավոք, այս հանդիպումը նա տանուլ տվեց: Սակայն, ինչ խոսք, աշխարհի առաջնության երկրորդ տեղը եւ արծաթե մեդալը շատ մեծ հաջողություն է:

Չորրորդ տեղով բավարարվեց Մովսես Կարապետյանը (76 կգ): Իններորդ տեղը գրավեց Արա Դնոյանը (49 կգ), իսկ մեր հանրապետության չորրորդ ներկայացուցիչ Գեւորգ Հակոբյանը (69 կգ) նախնական գոտեմարտերում անհաջողության մատնվեց եւ դուրս մնաց հետագա պայքարից:

Առաջին մենամարտերը

Լատվիայի Յուրմալա քաղաքում սկսվել է Եվրոպայի պատանեկան առաջնությունը, որտեղ հանդես են գալիս 29 երկրների 15-16 տարեկան 227 բռնցքամարտիկներ: Ինչպես տեղեկացրին ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության ֆիզկուլտուրայի եւ սպորտի հարցերի վարչության լրատվության բաժնից, Հայաստանի պատանեկան հավաքականի ավագ մարզիչ, ՀՀ վաստակավոր մարզիչ Ֆեդյա Ալեքսանյանը Յուրմալայից հեռախոսով հայտնել է, որ մարզադահլիճում տեղադրված երկու ռինգերում թեժ մենամարտեր են ընթանում:

Առաջին օրը ասպարեզ մտած մեր 5 պատանիներից 4-ը հաղթեցին իրենց մրցակիցներին: Նրանք են երեւանցիներ Հարություն Թովմասյանը (ՕՀՀՈՒ)՝ 48 կգ, Վահրամ Ղազարյանը («Հայաստան» մմ)՝ 81 կգ, գյումրեցի Գեւորգ Հարությունյանը՝ 57 կգ եւ էջմիածնցի Հովհաննես Բարսեղյանը՝ 60 կգ: Միայն երեւանցի Հայկ Չիլինգարյանը (ԲՀՊ)՝ 73 կգ, տանուլ տվեց իր մենամարտը: Ցավոք, մեր թիմը մի կորուստ եւս ունեցավ. հիվանդության պատճառով չմենամարտեց եւ մրցումներից դուրս մնաց Կարեն Խաչատրյանը (69 կգ): Երեք իրենց առաջին մենամարտերն անցկացրեցին նաեւ Մխիթար Դավթյանը (45 կգ), Էռնեստ Կարապետյանը (51 կգ), Արման Պետրոսյանը (54 կգ), Ժիրայր Գասպարյանը (66 կգ), իսկ Գեւորգ Հարությունյանը եւ Հովհաննես Բարսեղյանը մրցապարեզ մտան երկրորդ անգամ:

Հաջող մեկնարկ

Շախմատի Համաշխարհային մանկական օլիմպիադային, որն անցկացվում է Ստամբուլում, մասնակցում են 36 երկրների թիմեր, որոնցում ընդգրկված են մինչեւ 16 տարեկան շախմատիստներ:

Մրցումները հաջող են սկսել Հայաստանի ներկայացուցիչները՝ Լեւոն Արոնյանը, Գաբրիել Սարգսյանը, Վարուժան Հակոբյանը եւ Տիգրան Լ. Պետրոսյանը: Առաջին երկու տուրերում մեր տղաները միեւնույն 4-0 հաշվով պարտության մատնեցին Լիտվայի եւ Սլովակիայի շախմատիստներին: Ավելի ուժեղ մրցակից էր նրանց սպասում հաջորդ հանդիպման ժամանակ: Մրցելով Հնդկաստանի հավաքականի հետ՝ մեր պատանի շախմատիստները տարան իրենց երրորդ հաղթանակը: Սակայն այն ձեռք բերվեց մեծ դժվարությամբ: Սարգսյանը եւ Պետրոսյանը հաղթեցին մրցակիցներին, Արոնյանը ոչ-ոքի ավարտեց իր հանդիպումը, իսկ Հակոբյանը տանուլ տվեց: Այսպիսով, մրցախաղն ավարտվեց 2,5-1,5 հաշվով՝ հօգուտ Հայաստանի հավաքականի:

Երեք տուրից հետո մրցաշարային աղյուսակում առաջինը մեր շախմատիստներն են՝ 12 հնարավորից 10,5 միավոր: Երկրորդ տեղում է ընթանում կես միավորով ետ մնացող Ուկրաինայի հավաքականը (երեկ կայացած 4-րդ տուրում նրա հետ հանդիպեց Հայաստանի հավաքականը), իսկ երրորդը Ռումինիայի ներկայացուցիչներն են՝ 9 միավոր: Երեք թիմեր՝ Ռուսաստանը, Վրաստանը եւ Հնդկաստանը վաստակել են 8,5-ական միավոր եւ բաժանում են 4-6-րդ տեղերը:

Վերջում ավելացնենք, որ շվեյցարական մրցակարգով անցկացվող մրցումներում թիմերը 9-ական հանդիպում կանցկացնեն:

ԲԱԺԻՆԸ ՊԱՏՐԻՍ է
ՈՍՅՍԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՕՐՎԱ ԻԵՏՔԵՐՈՎ

ՎՐԱՍՏԱՆ

«Ջավախք»-ը պահանջում է ինքնավարություն Ախալքալաքի շրջանի համար

24 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Մեր գլխավոր նպատակն է Վրաստանի իշխանությունների կողմից Ախալքալաքի շրջանին ինքնավարության տրամադրումը», վրացական «Կավկազոյրես» գործակալությանը տված հարցազրույցում հայտարարել է «Ջավախք» հայկական ժողովրդական շարժման առաջնորդներից Երվանդ Շերինյանը: «Եթե Վրաստանի իշխանությունները հրաժարվեն մեզ կարգավիճակ տրամադրել, մենք կանցկացնենք գյուղական ժողովներ, որից հետո յուրաքանչյուր գյուղից լիազորվածները կհավաքվեն Ախալքալաքում եւ որոշում կընդունեն դարձյալ դիմելու Վրաստանի իշխանություններին: եթե մեզ չլսեն, ապա մենք ինքնուրույն իշխանությունը կվերցնենք մեր ձեռքը», հայտարարել է Շերինյանը, նշելով, որ դա կկատարվի խաղաղիրթ ճանապարհով, քանի որ զենք բարձրացնել իրենց վրաց եղբայրների դեմ հայերը չեն պատրաստվում: Միեւնույն ժամանակ Շերինյանը նշել է, որ «Հայաստանի հետ որեւէ միացման մասին խոսք անգամ չի կարող լինել»:

Ինչպես հաղորդում է գործակալությունը, հետաքրքրությունն Ախալքալաքի հայերի նկատմամբ նոր ուժով բռնկեց այն միջադեպից հետո, երբ վրացական զորքերին, որոնք ճանապարհվում էին Ախալքալաքի զինափորձարան, տեղի բնակչության կողմից չթույլատրվեց մուտք այնտեղ, ինչը միշտ էր մնում հանգեցներ արյունահեղության: Ըստ Շերինյանի, Վրաստանում ինքնավարություն ունի Աջարիան, ունեին Օսիան եւ Աբխազիան, իսկ ահա 92 տոկոս հայերով բնակեցված Ախալքալաքի շրջանը այդպես էլ ինքնավարություն չստացավ: «Մենք պահանջում ենք կարգավիճակ, քանի որ ունենք դրա լրիվ իրավունքը», հայտարարել է նա: Ըստ նրա, լավ կյանքից ոչ ոք չի փախչում, պարզապես Ախալքալաքի շրջանի հայերը կարծում են, որ իրենց հարկավոր է պահպանել սեփական լեզուն եւ ավանդույթները: Նա նաեւ նշել է, որ չի հասկանում, թե ինչու Վրաստանի արդարադատության նախարարությունը մինչեւ հիմա չի թույլատրում Հայաստանի դատմության ուսումնասիրումը:

«Ինձ անհասկանալի է, ինչու Վրաստանը չի ճանաչում 1915 թվականի հայոց եղեռնը, երբ այնպիսի տերություն, ինչպիսին Թուրքիան է, ճանաչեց այդ փաստը: Ինձ շատ բան հասկանալի չէ: Ինչ իրավունքով են Վրաստանի իշխանություններն ուզում դեռի Թուրքիա երկաթուղին անցկացնել Ջավախքով, չէ որ նրանք գիտեն մեր վերաբերմունքը «այդ թուրքերի նկատմամբ», զարմանում է Շերինյանը: «Ես գիտեմ, ինչու են նրանք (Վրաստանի իշխանությունները) ուզում այդ ճանապարհն անցկացնել, նրանք ուզում են, որպեսզի մենք հեռանանք Ախալքալաքից, բայց դա երբեք չի լինի, քանի որ հայերը ապրում են Ջավախքում դարեր ի վեր», ինքը «Ջավախքի» առաջնորդն էլ պատասխանում է:

Ըստ նրա, Ջավախքի հայ բնակչությունը չի ուզում, որ ռուս զինվորականները հեռանան Ախալքալաքից, որովհետեւ միակ ուժն են, որ կարող է պաշտպանել մեզ Թուրքիայի ագրեսիայի դեպքում»: «Մենք դեմ ենք, որ այստեղ կանգնեն վրացական զորամասերը, քանի որ դառը փորձ ունենք: 1918 թվականին թուրքերը հարձակվեցին Ջավախքի վրա, իսկ վրաց զորքերի հրամանատար Արջեւանիձեն, փոխանակ պաշտպանելու տեղի բնակչությանը, խայտառակ ձեւով փախավ Բորժոմ, եւ 40 հազար հայեր կոտորվեցին թուրքերի կողմից», հայտարարել է Շերինյանը: Ըստ նրա, Ախալքալաքից փախստական հայերին հետո այդ նույն Արջեւանիձեն չէր թողնում Բորժոմ, հիմնավորելով նրանով, որ նրանք վարակիչ հիվանդությամբ են հիվանդ: «Ոչ, մենք չենք հավատում վրացական զորքերին», եզրափակել է Շերինյանը:

Վրաստանը արգելել է Հայաստանից սենդամքերքի ներմուծումը

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, 24 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Արդեն երկրորդ օրն է, ինչ վրացական կողմը արգելել է Բագրատաշենի շուկայից (Տավուշի մարզ) անասունների, ընտանի թռչունների, ձվի, մսի, կաթնամթերքի եւ անգամ ձկնեղենի ներմուծումը: Վրացական իշխանությունները այդ քայլը պատճառաբանում են նրանով, որ իբր Հայաստանի Շիրակի մարզում (մասնավորապես նախկին Ամասիայի շրջանում) առկա է դաբաղ հիվանդություն:

Ինչպես «Նոյյան տապանի» թղթակցին հաղորդեց ՀՀ գյուղնախարարության անասնաբուժական վարչության պետ Անուշավան Աղաջանյանը, նա օգոստոսի 25-ին Հայաստանի եւ Վրաստանի սահմանագլխին Բագրատաշենում հանդիպելու է Վրաստանի գյուղնախարարության Անասնաբուժական ծառայության պետ Գրիգորի Ձիկիայի հետ: Պրն Աղաջանյանը նույն օրն այցելելու է երկու հանրապետությունների եւս երկու անցակետերը:

Վկայակոչելով ՀՀ գյուղնախարարության անասնաբուժական վարչության պետ Անուշավան Աղաջանյանին, ՀՀ գյուղնախարարության համակարգչային եւ լրատվական վարչության պետ Շչորս Դավթյանը հայտնեց, որ Վրաստանի սահմանապահներն արգելել են ոչ միայն սննդամթերքի, այլ նաեւ մարդկանց մուտքը Վրաստան:

Վրացական աղբյուրները, ինչպես նաեւ ՀՀ մաքսային վարչությունը այդ մասին դեռեւս ոչ մի տեղեկություն չեն հաղորդում:

Երեւան. Պապը լուսամուտից դուրս է նետել 2 ամսական թոռանը

ԵՐԵՎԱՆ, 24 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Օգոստոսի 21-ին Խորհրդային համայնքի Նոր Նորքի 2-րդ զանգվածի բնակիչ Գագիկ Սարգսի Պողոսյանը 5-րդ հարկում գտնվող իր բնակարանի պատշգամբից դուրս է նետել երկու ամսական թոռանը: Դիանային, որը տեղում մահացել է:

Խորհրդային դատախազությունում քրեական գործ է հարուցված 72-ամյա «պարիկի» նկատմամբ: Նա կալանավորված է: Նշանակված են փորձաքննություններ, այդ թվում եւ դատահոգեբուժական: Սակայն նախնական տեղեկություններով, որոնք հավաքվել են Գագիկ Պողոսյանի աշխատավայրում եւ բնակավայրում, նա հոգեկան որեւէ շեղում կամ տարօրինակություն չի ունեցել մինչ այդ:

Որպես հանցագործության շարժառիթի սկզբնական վարկած է համարվում այն, որ նա վաս հարաբերություններ է ունեցել իր տանը բնակվող դստեր ամուսնու հետ, որից էլ վրեժ է լուծել այդ ձեւով:

ԱՄՆ-ը տեւական պայքարի մեջ է մտել ահաբեկչական ուժերի դեմ

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 24 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: Միացյալ Նահանգները տեւական պայքարի մեջ է մտել ահաբեկչական ուժերի դեմ, հայտարարել է ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթը, կիրակի օրը ելույթ ունենալով էյ Բի Սի հեռուստաընկերության ծրագրով: Ամերիկյան արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի խոսքերով, անհրաժեշտ է հասկանալ, որ դա տեւական խնդիր է Վաշինգտոնի եւ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համար:

Անդրադառնալով անմիջականորեն Սուդանի եւ Աֆղանստանի տարածքներին ԱՄՆ-ի հասցրած հրթիռահարվածին, Օլբրայթն ասել է, որ դրա նպատակն է խոցել ահաբեկիչների հրամանատարական եւ կառավարման կառույցները: Միացյալ Նահանգները շատ լավ վկայություններ ունեն, որ դա առավել հարմար պահն էր տվյալ կառույցներին հարված հասցնելու համար:

«Մենք այն կարծիքին ենք, որ ԱՄՆ-ի համար, մեր ժողովրդի համար ահաբեկչության սպառնալիքը տեւական սպառնալիք է, որի հետ մենք հարկադրված ենք գործ ունենալ, նշել է տիկին Օլբրայթը: Մենք այն կարծիքին ենք, որ ինքնապաշտպանության օրինական իրավունք ունենք եւ մենք այդ մասին հայտարարում ենք»:

ՇԳՆԱԺԱՄ

Ռուսաստանը սեանկացած քաղաքագետները հեռանում են

ՄՈՍԿՎԱ, 24 ՕԳՈՍՏՈՍ, ՍՆԱՐՔ: Վիկտոր Չեռնոմիրդինը կառավարության կես-ժամանոց դռնփակ նիստ է անցկացրել: Ինչպես հայտնի դարձավ կաբինետի նիստին մասնակցած աղբյուրից, Վիկտոր Չեռնոմիրդինը նշել է, որ մտադիր չէ կառավարության նոր կազմում պահել այն նախարարներին, «ովքեր ուզում են հեռանալ»: Նիստի ավարտին փոխվարչապետի պաշտոնակատար Բորիս Նեմցովը հայտարարեց, որ հեռանում է կառավարությունից:

Այսպես, ըստ չճշգրտված տվյալների, կառավարության առաջին փոխվարչապետի պաշտոնը կարող է զբաղեցնել Բորիս Բերեզովսկին: Միեւնույն ժամանակ մի շարք աղբյուրներ պնդում են, որ նախկին փոխվարչապետ Օլեգ Սիսուեւը նոր կառավարությունում իր պաշտոնը չի պահպանի: Թերեւս նոր կառավարությունում չի լինի նաեւ Անատոլի Չուբայսը:

Պետդումայում «ժողովրդավարական Ռուսաստան» խմբակցության ղեկավար Ալեքսանդր Շոխինը, մեկնաբանելով Նեմցովի հրաժարականը եւ Չուբայսի հնարավոր հեռանալը, նրանց «սնանկացած» քաղաքագետներ անվանեց:

Լիբերալ ժողովրդավարական կուսակցության ղեկավար Վլադիմիր Ժիրինովսկին պահանջեց նոր կառավարության ստեղծում կոալիցիոն հիման վրա, նրանում նախարարական պաշտոններում խմբակցության 9-11 ներկայացուցչի պարտադիր ներգրավմամբ: Ինքը՝ Ժիրինովսկին ցանկություն հայտնեց նախարարների նոր կաբինետում ցանկացած, ըստ Վիկտոր Չեռնոմիրդինի հայտնության, գործունեության ոլորտները ղեկավարող փոխվարչապետի պաշտոնը զբաղեցնել: Մինչդեռ Չեռնոմիրդինը պաշտոնապես հայտարարեց, որ կառավարության կազմը կհրապարակի միայն այն ժամանակ, երբ Պետդուման կհաստատի իրեն վարչապետի պաշտոնում:

Ռիժկով. «Կուրորեն կառավարության մեջ չմտնել»

ՄՈՍԿՎԱ, 24 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Պետդումայի խորհուրդն այսօր քվեների մեծամասնությամբ որոշում ընդունեց պալատի նախագահ Գենադի Սելեզնյովին հանձնարարել ՌԴ նախագահին դիմել Պետդումային հասցեագրված նամակը ետ վերցնելու խնդրանքով, որով առաջարկվում է համաձայնություն տալ Վիկտոր Չեռնոմիրդինին նշանակելու ՌԴ կառավարության նախագահ:

Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, այդ մասին մամլո ասուլիսում հայտարարել է «ժողովրդապետություն» պատգամավորական խմբի ղեկավար Նիկոլայ Ռիժկովը:

«Այսօր ժամանակի հաշվիչը պետք է անջատել: Միայն այս դեպքում կարելի է մտածել ապագայի շուրջ լուրջ խոսակցության մասին», ասել է նա այն կարծիքը հայտնելով, որ անհրաժեշտ է նախ մշակել «երկրի սոցիալ-տնտեսական կարգի բարենորոգման միանգամայն հստակ ծրագիր»:

Դրա համար, հայտարարել է նա, պետք է ներգրավել խոշոր մասնագետների, գիտնականների, գործնական աշխատողների, որոնք ներկայացնեին պետության հիմնական քաղաքական ուժերը: Նիկոլայ Ռիժկովի կարծիքով, նրանք կարող էին նման ծրագիր մշակել 2-3 շաբաթվա ընթացքում: Միայն թե նման ծրագիրը մշակվի եւ բավարարի ժողովրդին ու խորհրդարանին, այդ դեպքում կարելի է խոսել կառավարության մեջ կուսակցությունների եւ շարժումների ներկայացուցիչների մտնելու մասին: «Մեր կարծիքով, կուրորեն կառավարության մեջ մտնելը՝ չիմանալով նրա վարելիք գիծը, անօգուտ է», ավելացրել է նա:

ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵՔ

1998 թ. սեպտեմբերի 1-ից կարող եք «Ազգ» բաժանորդագրվել զեղչ գներով, Հայաստանի կրպակներում կամ Հայփոստի բաժանմունքներում:

ԶԵՂՉ ԳՆԵՐՈՎ

Ամսական բաժանորդագրություն՝ ~~2400~~ 2000 դր.

Եռամսյա բաժանորդագրություն՝ ~~6300~~ 5000 դր.

Վեցամսյա բաժանորդագրություն՝ ~~12600~~ 9000 դր.

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

առանձնատուն, 80 քառ. մ. նկուղ-ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի: Զանգահարել 27-22-57 ժամը՝ 10-16, 58-33-26 ժամը՝ 18-23

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

4 սենյ. սեփ. տուն, Ն. Շենգավիթ, 2-րդ փող, 7-րդ տուն, նկուղ, այգի 700 քմ, հեռ.՝ 44-97-40

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

1 սենյականոց բնակարան, 19 քմ., Նորքի զանգվածում: Հեռ.՝ 63-63-42

Robin Generators RGX3500

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

բենզինով աշխատող միաֆազ էլեկտրագեներատորներ: ☎ 529353

հաճախակ.	մաքս. հզ.	նոմ. հզ.	աշխ. ժամ	տարող.
50 Հց	3.0 Կվտ	2.5 Կվտ	7.1 ժ	13 լ
60 Հց	3.5 Կվտ	3.0 Կվտ	6.1 ժ	



«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) * տեղեկագրքերով * մագնիսական սկավառակներով * INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Պատճեն 892 Տպաքանակը՝ 3500 Ստորագրված է տպագրության՝ 24.08.1998 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@